


24607

С. 1930 / 1930




Центральный Комитет Профсоюза
Сельхозлесрабочих СССР



ԽՍԴՊԵՍ ՊԵՏՔ Ե ԱՇԽԱՏԻ
ԳՅՈՒՂԲԱՆԿՈՄԻ ՎԵՐԱ-
ՍՈՒԳԻՉ ՀԱՆՉԱԺՈՂՈՎԸ



ԽՍԴՄ Գյուղ. և Անտառ. Բանվորների
Պրոֆմիության Կենտրոնական Կոմիտե



ՐԱԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԽՈՏՈԿԵՎԵԼԵԿԱ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՆՐԱ

23 AUG 2013

C. 1930/1264

С-4
Сл1813

15 JAN 2010

ъ. энгельс

331.88

S-60

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԱՇԽԱՏԻ ԳՅՈՒՂԱ-
ՏԵՏԵՍԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՑԻ
ՎԵՐԱՍՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԻՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ

1929

Ցպագրվում է ԽՍՀՄ Գյուղատնտեսական լեզ անտառա-
գործական բանկութիւնի պրոֆեսիոնալ միուրյան («Հողան-
տառմիուրյան») Անհրաժեշտական Կոմիտեի պատվերով:

Անհրաժեշտական
Կոմիտեի պատվերով



59211-66

Կհ. ֆ-կա ЦИЭ'ա Նարодов СССР. Մոսկվա, Շլյոզովի պր., 6.
Главлит № А 13353. Зак. № 291. Тираж 3000.

ՆԵՐԱՄԱՒԹՅՈՒՆ

Վերաստուգիչ հանձնաժողովին, ինչպես և գյուղ-
բանկոմին ընտրում է ընդհանուր ժողովը, Արդեն
միայն այդ հանգամանքը նրան տարբերում է գյու-
ղական բանվորական կոմիտեյի մյուս բոլոր հանձնա-
ժողովներից, որինակ, կուլտհանձնաժողովից, աշխա-
տանքի պաշտպանության հանձնաժողովից և այլն:
Այդ բոլոր հանձնաժողովներին ընդհանուր ժողովը չի
ընտրում. նրանց կազմում է գյուղգյուղանկոմը և նրանք
իրենց կատարած աշխատանքի համար հաշվետու յեն
վերջինիս առաջ: Վերաստուգիչ հանձնաժողովը գյուղ-
բանկոմին հաշվետու և յենթակա չե: Նա հաշվետու
յե իրեն ընտրող միության անդամների և իրենից
բարձր կանգնած արհմիութենական մարմնի առաջ
(ուստի կոմիտեյի, գավառային բաժնի կամ շրր-
ջանային բաժնի առաջ), աշխատելով վերջինիս ան-
միջական դեկավարության տակ:

Վերաստուգիչ հանձնաժողովը հսկայական նշա-
նակություն ունի դյուղբանկոմի դրամական աշխա-
տանքի կարգավորման խնդրում և պայքարելու գոր-
ծում այնպիսի խայտառակ յերկույթի զեմ, վորափին
և միութենական միջոցների վատնակմբ:

ՀԻ ԸՆԴՈՒՅԱ
ՎՈՐՈԽԵДЕՐԱ
Ակադեմիա Հայէ
ՀՀ ՀՀ

Ում, յիթե վոչ վերաստուգիչ հանձնաժողովին, ամենից շատ պետք ե հայտնի լինի գյուղբանկոմի դրամական աշխատանքը, նրա բոլոր բացասական և դրական կողմերը։ Վճէ ռայոնական կոմիտեն, և մասնավանդ, վոչ ել գավառային բաժինը չեն կարող սիստեմատիկ կերպով հսկողության յենթարկել գյուղանկոմի դրամական աշխատանքը։ Նման հսկողության համար ռայոնական կոմիտեները չունեն վոչ բավական ուժ և վոչ ել միջոցներ։

Ընդհակառակը, գյուղբանկոմի վերաստուգիչ հանձնաժողովը կարող է յուրաքանչյուր ամիս վերաստուգություններ կատարել և այդպիսով սիստեմատիկորեն իրականացնել հսկողությունը՝ գյուղբանկոմի վարչապետական և տնտեսական աշխատանքի վրա։

Գյուղատնտեսական և անտառագործական բանվորների միության համամիութենական հիմքերորդ համագումարը վերաստուգիչ հանձնաժողովներին պարագանեցրեց կանոնավոր կերպով կատարել ստուգումներ և նրանց վրա պատասխանատվություն (անմիջական հանցագործներին հավասար) գրեց դրամական աշխատանքում նկատվող բոլոր անկանոնությունների և միության միջոցների վատնումների համար։

Չե վոր վերաստուգիչ հանձնաժողովը նենց նրա համար ե ընտրվում, վորպեսզի մեծ ուշադրությամբ ստուգի՝ ինչպես են հավաքվում անդամավճարները և ճշուգիտմբ են արդյուք նրանք ծախսում ու պահպան։ Յեկ յեթե վերաստուգիչ հանձնաժողովը

յուր ժամանակին միջոցներ ձեռք չի առել դրամական աշխատանքի թերությունները վերացնելու համար, յուր ժամանակին վերաստուգություն չի կատարել, դա նշանակում է, վոր նա չի կատարել յուր պարապականությունները և պետք ե յուր թերանալու համար պատասխան տա։

Ահա թե ինչ ե ասում այդ մասին Մ. Պ. Տումակին — ԽՍՀ Միության Արհեստակցական Միությունների Համամիութենական Խորհրդի նախագահը. «Մի ամաչիր ստուգել այն ընկերոջը, վորը ծախսում է փողերը։ Մեզ մոտ, հեղափոխականներիս մոտ, այսպիսի մի սովորություն կա՝ Եհ, անհարմար է լովի ընկերոջը մոտենալ կոպեկների հաշվով և այլն։ Մոռանում են, վոր գեմոկրատիան այնպիսի ձև ե, վորը յենթարում է կազմակերպված, մասսայական անվատահություն։ Դեմոկրատիան կառուցված ե նրա վրա, վոր յերբ յես քեզ ընտրում եմ, յես քեզ վատահում եմ, սակայն յերբ յես քեզ ընտրեցի, — յես քեզ պիտի ստուգեմ... Մենք վորպես որենք պիտի ընդունենք, վոր մեղավոր և վոչ միայն նա, վորը ճիշտ չի ծախսում միջոցները, այլ և նա, վորը կողքին նստում և չի տեսնում, նա, վորը չի ստուգում, նա, վորն այդ գործով չի հետաքրքրվում»։

Վերաստուգիչ հանձնաժողովի անդամներ ընտրելով, միության անդամները զրանով մեծ վատահություն են հայտնում ընտրվողներին։ Վերաստուգիչ հանձնաժողովը յուր ընտրողների վատահությունն ամ-

բողջությամբ կարող ե արդարացնել միայն այն դեպքում, յերբ նա բարեխղճորեն կատարի իր վրա զրված պարտականությունները, այսինքն կանոնավոր կերպով և ուշադրությամբ ստուգի գյուղբանկոմի դրամական աշխատանքը:

ՎԵՐԱՍՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՒՂԵՂ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ստուգել գործի ճիշտ կատարումը կարելի յէ միայն այն ժամանակ, յերբ ինչդղ պիտես, թե ինչպես պետք ե այդ գործը ուղիղ կատարել: Այդ պատճառով ել վերաստուգիչ հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ պետք ե ծանոթանա միութենական բարձր մարմինների այն ցուցմունքների և կարգադրությունների հետ, թե գյուղբանկոմը ինչպես պետք ե տանի յուր դրամական աշխատանքը: Գյուղբանկոմի և նրա աշխատանքների ծախսերի համար հատկացված միջոցների տերը հանդիսանում ե ընդհանուր ժողովը և ընդհանրապես միությունը: Միջոցների ծախսման ուղղությունը տալիս ե միությունը և գյուղբանկոմը պետք ե իրագործի այդ վորոշումները: Այդ պատճառով ել վերաստուգիչ հանձնաժողովը պարտավոր ե ծանոթանալ միութենական մարմինների այն վորոշումների հետ, վորոնք վերաբերում են դրամական հարցերին: Զիմանալով միութենական բարձր մարմինների ցուցմունքները, վերաստուգիչ հանձնա-

ժողովը չի կարողանալու միշտ կերպով ստուգել գյուղբանկոմի դրամական աշխատանքը: Յերբեք ել բավական չի միմիայն ծանոթանալ նրա հետ, թե ինչպես ե զրված դրամական աշխատանքը, անհրաժեշտ ե դեռ համոզի՛ արդյոք ամեն բան այնպես ե արվել, ինչպես դա պետք ե կատարվեր միութենական բարձր մարմինների ցուցմունքների համաձայն: Վերաստուգիչ հանձնաժողովը պարտավոր ե միշտ ել ծանոթ լինել դրամական հարցերին վերաբերող ցուցմունքների և վորոշումների հետ, վորոշիտեև մեր միության ավելի բարձր մարմինները, այս կամ այն ժամանակամիջոցում կարող են տալ նոր ցուցմունքներ, վորոնք պետք ե ինկատի առնվեն վերաստուգություն կատարելու ժամանակ:

Յերկորդ պայմանը — վերաստուգումները պետք ե հաջորդեն միմիանց կանոնավոր կերպով և այդ վերաստուգումների ժամանակ անհրաժեշտ ե մանրամասնորեն և ուշագրությամբ ստուգել գրամական ամբողջ աշխատանքը: Վերաստուգիչ հանձնաժողովների մասին գոյություն ունեցող կանոնադրության համաձայն, վերաստուգումները պետք ե կատարվեն ամեն ամիս:

Դործի սպուտի տեսակետից անհրաժեշտ ե, վորոշովի վերաստուգիչ հանձնաժողովը ամենայն խստությամբ պահպանի այդ կանոնադրությունը: Զե վոր մի ամսվա բոլոր փաստաթղթերը, գրամական աշխատանքի

ճիշտ կազմակերպումը, որինակ, անդամակնարների գանձումը, վարձողներից վարող տոկոսի (վերադրույթ — начисление)ստացումը աշխատանքային պայմանագրերի դիմաց, և այլն ստուգելն ավելի հեշտ եւ Ամեն ամիս վերաստուգումներ կատարելով, վերաստուգիչ հանձնաժողովը տեղյակ եւ լինելու գյուղբանկոմի գրամական ամբողջ աշխատանքին և հնարավորություն եւ ունենալու լավ ծանոթանալ նրա հաշվապահության ու հաշվետվության հետ և դրա շնորհիվ կարողանալու յեւ ավելի շատ թերություններ վերացնել գյուղբանկոմի դրամական աշխատանքներից:

Բացի կանոնավոր, ամենամսյա վերաստուգումներից, հարկավոր եւ գործադրել նաև հանկարծակի վերաստուգումներ, փորոնց մասին վերաստուգման յենթարկվող մարմինը նախորոք չգիտե և նախապատրաստված չեն նրանց համար: Հանկարծակի վերաստուգումները կարող են սահմանափակվել դրամարկղի փողերի կանխիկության և գյուղբանկոմի այս կամ այն գույքի ստուգմամբ: Նման վերաստուգումները նպաստում են յերեան բերել միության փողերի վատնումները և հետևապես, հանդիսանում են այդ խայտառակ յերեւույթի դեմ կովելու ամենառողբիղ միջոցը:

Յերբորդ պայմանը—վերաստուգիչ հանձնաժողովի հաստատակամությունը և կայունությունը՝ կյանքում անցկացնելու անցկացնելու առաջարկները, վոր նա արել եւ վերաստությունը կատարելուց հետո: Առաջարկները,

թեկուզ ոգտակար առաջարկները, վոչ մի ոգում չեն ունենա, յեթե նրանք մնան միայն թղթի վրա: Այդ պատճառով եւ, հաջորդ վերաստուգությունը սկսելուց առաջ, հարկավոր եւ ստուգել, իրավործել եւ արդյոք գյուղբանկոմն իրեն արված նախկին առաջարկները: Յեթե չի իրավործել, ապա բացատրություն պահանջել, թե ինչ պատճառներով այդ արված չեւ: Առաջարկությունները անհարգելի պատճառներով չիրագործելու մասին հարկավոր եւ զբեկ ակտի մեջ և կրկին առաջարկել նրանց իրավործել: Այն գեպքում, յերբ գյուղբանկոմն ուղղակի չի ուղում հաշվի առնել վերաստուգիչ հանձնաժողովի տոաջարկները, անհրաժեշտ եւ հարցը դնել ուայնական կոմիտեի կամ միության անդամների ընդհանուր ժողովի առաջ: Յեթե չիրագործելու պատճառները վերաստուգիչ հանձնաժողովը գտնի հարգելի և համաձայնի յետ վերցնել յուր առաջարկները կամ հետաձգել՝ նրանց կիրառումը, ապա այդ մասին ևս անհրաժեշտ եւ ցույց տալ վերաստուգության ակտի մեջ:

Վերաստուգիչ հանձնաժողովների մասին գոյություն ունեցող կանոնադրության և միության կանոնադրության համաձայն, վերաստուգիչ հանձնաժողովին իրավունք ետրված՝ միութենական միջոցների ծախսման մեջ չարաշահություններ հայտնաբերելու դեպքում պահանջել միության անդամների ընդհանուր ժողով գումարել:

Այդ իրավունքով վերաստուգիչ հանձնաժողովներն առայժմ ամեններն չեն ոգտվում: Մենք վոչ մի դեպք

չպիտենք, վոր, հայտնաբերելով չարաշահություններ, վերաստուգիչ հանձնաժողովը յուր նախաձեռնությամբ գումարած լիներ միության անդամների ընդհանուր ժողով։

Այդ յերբեք չպետք է հասկանալ այնպես, վոր ամեն մի հարցի առթիվ վերաստուգիչ հանձնաժողովը, համաձայնության գալով ուղյուական կոմիտեյի հետ, պետք է ընդհանուր ժողով գումարի։

Այդ իրավունքի իրականացումը կյանքում, վերաստուգիչ հանձնաժողովից պահանջում է խոշոր զգուշություն և նրա վրա դնում ահազին պատասխանատվություն։

Այդ պատճառով ել այդ իրավունքը պետք է ողտագործել իսկապես անհրաժեշտ դեպքերում։

Տեղին և նկատել, վոր վերաստուգիչ հանձնաժողովների մասին գոյություն ունեցող կանոնադրության համաձայն, վերաստուգությունները պետք է կատարվեն բանվորական ժամանակից դուրս և միայն բացառիկ դեպքերում — բանվորական ժամանակում։ Իրենց աշխատանքի համար վերաստուգիչ հանձնաժողովները վարձատրություն չեն ստանում։ Վարձատրություն վորպես կորցրած աշխատավարձի հատուցում, կարող ե արվել միայն այն դեպքում, յերբ վերաստուգման աշխատանքը կատարվում է բանվորական ժամանակի ընթացքում։

Ինչու համար վերաստուգիչ հանձնաժողովները վարձատրություն չեն կարող ստանալ, Առաջին՝ նրա

համար, վոր միութենական սկզբնական մարմինների և նրանց հանձնաժողովների ամբողջ աշխատանքը կառուցվում է հասարակական ինքնուրույնության և բանվորական լայն մասսաների ինքնազործներության վրա։ Առանց այդպիսի կազմակերպված ինքնազործներության անյերևակայելի կլիներ այն հսկայական աշխատանքը, վոր կատարում են միութենական սկզբնական մարմինները՝ միության աշխատանքի բոլոր ճյուղերն ընդգրկող զանազան հանձնաժողովների միջոցով։ Յերկրորդ՝ նրա համար, վոր, ստանալով վարձատրություն, վերաստուգիչ հանձնաժողովը կամա թե ակտմա պիտի կախում ունենար նրանից, ով այդ վարձատրությունը վճարում է։ Դա կարող եր նվազեցնել նրա ինքնուրույնությունը, վորպիսի հանգամանքը յուր հերթին անդրադառնալու յեր նաև աշխատանքի վրա։

ԳՅՈՒՂԲԱՆԿՈՄԻ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Գյուղբանկոմի դրամական աշխատանքը բաղկանում է, զիմանական մամենաներից՝ ա) միջոցների ստացումից և բ) ստացած միջոցների ծախսելուց և պահելուց։

Միջոցները ստացվում են յերկու աղբյուրից։ Առաջին աղբյուրը — այն վորոշ տոկոսներն են (վերադրույթ), վոր ստացվում են՝ ըստ աշխատանշային պայմանագրերի և տարիֆային համաձայնությունների։

գյուղբանկոմի պահպանման և կուլտաշխատանքի ծախսերի համար: Յերկրորդ աղբյուրը — ամենամոյս անգամավճարները, վոր պետք և հանձնել միության բարձր մարմին, ինչպես նաև անգործներին ողնություն ցույց տալու համար յեղած մուծումները:

Միջոցների ծախսումը բաժանվում է յերկու հիմնական տեսակների՝ 1) ծախսեր միության անդամների ու բարակության մեջ մասսայական աշխատանք տանելու համար (ծախսեր՝ անգրագիտության վերացման և ուրիշ տեսակ կուլտաշխատանքների վրա, ծախսեր՝ անգործության ժամանակ ոգնություն ցույց տալու համար և այլն) և 2) ծախսեր՝ գյուղբանկոմի պահպանման համար (աշխատավարձ՝ ուրիշ գործերից պատված աշխատակիցների համար, անտեսական, գրասենյակային և առաջման ծախսեր):

Այժմ անցնենք այն հարցին, թե ինչպես պետք է կատարել մուտքի և յեկըի ստուգումը յուրաքանչյուր տեսակի համար առանձին առանձին:

Վերադրույթներ ըստ աշխատանքային պայմանագրերի և տարիփային համաձայնությունների: — Ամենից առաջ վերաստուգիչ հանձնաժողովը պետք է սահմանի, թե գյուղբանկոմը վերադրույթներն ստանալու համար ինչպիսի կարգ և սահմանել (այդ գումարներն ստանում են գյուղբանկոմի գանձապահը, թե առանձին գանձողները, վորոնք լիազորված են այդ բանի համար գյուղբանկոմի համապատասխան վորոշմամբ): Դրանից հետո հարկավոր ե-

պարզել, թե գյուղբանկոմը վերաստուգության յենթակա ժամանակամիջոցում վորքան վերադրույթ ե ստացել և վորքան պիտի ստանար:

Այդ պետք է կատարել հետևյալ ձևով. դրամական պահանջագրույթից (ведомость) վերցվում են վերադրույթների այն գումարը, վոր փաստորեն ստացել են գյուղբանկոմը մինչև վերաստուգման մոմենտը: Այնուհետև աշխատանքային պայմանագրերի հաշվառման գրքույթի համաձայն կամ ուղղակի ըստ աշխատանքային պայմանագրերի և տարիփային համաձայնությունների, վերաստուգիչ հանձնաժողովը հաշվում է այն գումարը, վոր գյուղբանկոմը պետք է ստանար այդ նույն ժամանակամիջոցում:

Ենթադրենք թե վերադրույթների հաշվառումն ըստ աշխատանքային պայմանագրերի և տարիփային համաձայնությունների ցույց ե տալիս, վոր վերաստուգման յենթակա ժամանակամիջոցում գյուղբանկոմը զանազան վարձողներից պետք է ստանար 60 ոռելի, բայց ստացել ե ընդամենը միայն 30 ոռելի. ուրեմն չհավաքված գումարը այդ ժամանակամիջոցում կազմում է 30 ոռելի, կամ պահանջված գումարի կեսը:

Դրանից հետո հարկավոր ե պարզել, թե ինչ պատճառով այդ 30 ոռելին չի հավաքված: Կարող ե պատահել, վոր գյուղբանկոմը այս կամ այն վարձողին աշխաթող ե արել և համապատասխան միջոցներ ձեռք չի առել հարկավոր գումարները ստանալու համար: Բայց կարող ե պատահել և այն, վոր գյուղբանկոմն

այդ գումարները ստանալու համար միջոցներ ձեռք
առել ե, սակայն վարձողը չի կարողացել վճարել
պահանջված փողերը, խոստանալով այդ անել մի քանի
ժամանակից հետո։ Այս վերջին գեղջում գյուղբան-
կոմը պետք է յուր մոտ ունենա վարձողի ստորա-
զըությունն այն մասին, վոր նա (վարձողը) իրենից
պահանջված գումարը վճարելու յե փորոշված ժամա-
նակին։ Այդ սառազգությունները չստացված գու-
մարների մասին, ծառայելու յեն վորպես ապացույց,
վոր գյուղբանկոմն իսկապես միջոցներ ձեռք առել ե
վերադրույժները հավաքելու համար։

Բացի դրանից, հարկավոր ե ստուգել, արդյոք վե-
րադրույժները կանոնավոր են գանձվում։ Վարձողի հետ
կնքած յուրաքանչյուր պայմանագրում մատնանշվում
ե, թե վարձողն ինչպիսի պայմանաժամերում պետք
ե վճարի իրենից պահանջվող մուծումները։ Իսկ կըտ-
րոնագրքույկում, վարով գյուղբանկոմը վարձողներից
ստանում ե վերադրույժները, ցույց են տրվում այն
փաստական պայմանաժամերը, վորոնց համաձայն
վարձողը պետք ե կատարի մուծումները։ Համեմա-
տելով այդ յերկու պայմանաժամերը, վերաստուգիչ
համաժողովը հեշտությամբ կարող ե սահմանել,
արդյոք յուր ժամանակին ե գյուղբանկոմը գանձում
վարձողից պահանջվող գումարները։ Յեթե պարզիվ,
որինակի համար, վոր կիրակոսյանը մայիսի 15-ին
պետք ե վճարեր 3 ռուբլի, իսկ գյուղբանկոմը նրա-
նից ստացել ե այդ 3 ռուբլին հուլիսի 15-ին, ապա

հենց այդ նշանակելու յե, վոր գյուղբանկոմն անկա-
նոն ե ստանում վերադրույժները։

Այն դեպքում, յերբ վերադրույժների գանձումը
կատարում են առանձին գանձողները, վերաստուգիչ
հանձնաժողովն ամենից առաջ պետք ե ստուգի այդ
գանձողներին — ունեն արդյոք իրենց մոտ համարակալ-
ված և գյուղբանկոմի կնիքով կնքված կարոնի գըր-
քույկներ, ունեն արդյոք վարձողների ցուցակը և
այդ ցուցակիներում մատնանշված են այն պայմանա-
ժամերը, վորոնց համաձայն վարձողները պետք ե
վճարեն վերադրույժները։

Այդ բոլորից հետո անհրաժեշտ ե համոզվել, ար-
դյոք գանձողները յուր ժամանակին և ամբողջությամբ
են հանձնում հավաքած գումարները գյուղբանկոմին։
Այդ բոլորը կարելի յե իմանալ կարոնագրքույժից,
վորը վերաստուգման ժամանակ ստուգման համար
վերցվում ե գանձողներից։ Այդ գրքույկի արմատների
վրա պետք ե լինի գյուղբանկոմի ստորագրությունն
այն մասին, վոր նա գանձողից ստացել ե հավաքված
վերադրույժները։

Վորպեսպի ստուգել, թե արդյոք յուր ժամանակին
են հանձնվում գյուղբանկոմին վերադրույժները, հար-
կավոր ե վարձողներից այդ գումարները ստանալու
ժամանակը (տարին, ամիսը և ամսաթիվը) համեմա-
տել գյուղբանկոմի ստորագրության (կամ ստացա-
կանի) ժամանակի հետ։ Իսկ վորպեսպի ստուգել, ամ-
բողջությամբ են արդյոք փողերը հանձնվում գյուղ-

բանկոմ, հարկավոր ե ստացված փողերի գումարը
համեմատել այն գումարի հետ, վորը ցույց ե տրված
բոլոր արմատների վրա գյուղանկոմի արած ստորա-
դրությունների կամ ստացականների համաձայն:

Յեթե պարզվի, վոր ըստ մի քանի կտրոնների
վերպարույքները ստացված են մի ամիս առաջ և
նրանց վրա չկա գյուղանկոմի ստորագրությունը,
ապա այդ նշանակելու յե, վոր գանձողները գանձված
փողերն անկանոն են հանձնում: Իսկ յեթե այդ կըտ-
րոնների ցույց տված գումարը գանձողները լրիվ
կերպով կանխիկ չունենան, ապա այդ պետք ե դի-
տել վորպես միության միջոցների վատնում,

Պարզելով այդ բոլորը, վերաստուգիչ հանձնաժո-
ղովը կարող ե ասել, թե գործերը այսուեղ լինչպես
են—լավ թե վատ:

Անդամավճարները:—Այսուեղ, ինչպես և առա-
ջին դեպքում, նույնպես հարկավոր ե պարզել միու-
թյան անդամներից անդամավճարներն ստանալու
կարգը, այսինքն, հարկավոր ե պարզել՝ ստանում ե
արդյոք ինքը գյուղբանկոմի նախագահը, թե առան-
ձին գանձողները: Ապահովում ե արդյոք այդ կարգն
անդամավճարների լրիվ ստացումը և միության ան-
դամների համար ստեղծում ե հնարավորություն՝ վոր
նրանք կանոնավոր կերպով վճարեն:

Կարող ե պատահել, վոր գյուղբանկոմի նախա-
գահը կամ գանձողը (հավաքողը) միության անդամից
ստանում են անդամավճարն՝ աշխատավարձն ստանա-

լուց յերկար ժամանակից հետո կամ մինչև աշխատա-
վարձն ստանալը՝ յերբ միության անդամի համար
շատ դժվար ե վճարել, կամ գանձումը կատարվում
ե այն ժամանակ, յերբ աշխատավարձ ե ստանում
միության անդամների այս կամ այն խմբակը: Կարող
ե պատահել և այն, վոր գյուղբանկոմը գանձողներ
չունի, իսկ գանձումը կատարում ե ինքը նախագահը,
և դա այն ժամանակ, յերբ նրա կազմակերպության ան-
դամների թիվը շատ ե (100—150 մարդ) և այդ ան-
դամները աշխատում են զանազան տեղերում: Պարզ
բան ե, վոր նման դեպքում նախագահը, հակառակ
իր ցանկության, չի կարողանալու միության բոլոր
անդամներից յուր ժամանակին ստանալ անդամավճար-
ները, իսկ միության անդամները հնարավորություն
չեն ունենալու կանոնավոր կերպով վճարել, այսինքն
չեն կարողանալու անդամավճարներն անձամբ բերել
գյուղբանկոմ, վորովհետև դա կապված ե աշխատան-
քից կտրվելու և աշխատավարձի մի մասը կորցնելու
հետ: Այդպիսի դեպքում հարկավոր ե գյուղբանկոմին
ցույց տալ, վոր անհրաժեշտ ե անդամավճարներն
ստանալու այդ կարգը փոխել:

Դրանից հետո հարկավոր ե հաշվել, թե գյուղ-
բանկոմը փաստորեն վճրքան անդամավճար ե ստա-
ցել և վճրքան պետք ե ստանար վերաստուգման յեն-
թակա ժամանակամիջոցում: Թե վորքան անդամա-
վճարներ են ստացված, կարելի յե տեսնել դրամար-
կղի պահանջագրքույկում, ուր նշանակվում ե այս



СОВЕТСКАЯ АКАДЕМИЯ НАУК ССР
ИСТОРИЧЕСКИЙ ИНСТИТУТ
САНКТ-ПЕТЕРБУРГ

կամ՝ այն փաստական գումարը, վոր ստացված են մինչև վերաքննության որը։ Յեվ վորպեսզի սահմանել, թե վորքան անդամավճարներ դեռ չեն ստացված, հարկավոր են վերցնել անձնական քարտերը կամ միության անդամների հաշվառման գրքույղը և նրանց միջոցով պարզել, արդյոք միության անդամների վոր մասը և քանի ամսությունը վճարել անդամավճարները մինչև վերաստուգման մոմենտը։

Այնուհետև գյուղբանկումից հարկավոր են տեղեւկություններ ստանալ, թե նրանք, ովքեր վորոշամիսների անդամութարները չեն վճարել, այդ ամիսներին վճրքան աշխատավարձ են ստացել, և այդ աշխատավարձի ամբողջ գումարից դուրս գալ 2%։ Ստացված գումարը հենց լինելու յետ չստացված անդամավճարների մոտավոր գումարը։

Գործը բոլորովին չի փոխվում և այն ժամանակ, յերբ միության անդամները, որինակ հովիվները, աշխատավարձն ստանում են վոչ ամեն ամիս, այլ պայմանագրում ցույց տրված այլ ժամանակամիջոցներում։ Փոխվելու յետ միայն հաշվելու կարգը։ Որինակի համար, յենթադրենք գյուղբանկումը ընդգրկում է միության 15 հովիվ անդամներ։ Յենթադրենք, վոր նրանք աշխատավարձ ստանում են 3 անգամ — հունիսի 15-ին, ոգոստոսի 15-ին և հոկտեմբերի 15-ին։ Նշանակում են, հունիսին նրանք պետք են վճարեն այն գումարից, վորն ստացել են առաջին անգամ։ Իսկ յեթե նրանք հունիսին չեն վճարել և վճարում են

միայն ոգոստոսին, ապա նրանց պետք են հաշվել՝ անդամավճարներն անկանոն վճարողներ։

Վերաստուգումների ժամանակ հարկավոր են ցույղը կերպով պարզել, թե ինչով են բացատրվում անդամավճարների կիսատ հավաքվելը, արդյոք նրանով, վոր անդամավճարներն ստանալու կարգը լավ չի կանոնավորված (վորի մասին արդեն տեղ ենք), արդյոք նրանով, վոր գյուղբանկումը միության անդամներին չի բացատրել, թե ինչի համար են անդամավճարը և ինչու այդ պետք են կանոնավոր կերպով վճարել և ինչի՞ վրա յեն ծախսվում անդամավճարները։

Անհրաժեշտ են նմանապես պարզել, թե գյուղբանկում ինչպես են պայքարել անդամավճարների անկանոն վճարման դեմ։ Գյուղբանկումը հայտարարել են արդյոք՝ անդամավճարներն առանձնապես անկանոն վճարողների ցուցակը, նրանց հարցը ներկայացրել են արդյոք ընդհանուր ժողովի քննությանը, այդ անկանոն վճարողներին նաև բացատրել են, թե մեր միության կանոնադրության համաձայն անդամավճարների անկանոն վճարումն ինչպիսի հետևանք կարող եռ ունենալ և այլն։

Ստուգելով այս բոլորը, վերաստուգիչ հանձնաժողովը կարող են ասել, թե ինչպես են գործերն այստեղ — լավ թե վատ։ Յեթե վատ են, ապա, վերաստուգիչ հանձնաժողովի կարծիքի համաձայն, ինչպիսի միջոցներ են անհրաժեշտ ձեռք առնել՝ հայտնաբերված թերությունները վերացնելու համար։

Վերաստուգիչ հանձնաժողովը յուրաքանչյուր վերաստուգման ժամանակ պետք ե յուր լուրջ ուշադրությունը դարձնի միջոցների ստացման ստուգման վրա (ըստ աշխատանքային պայմանագրերի և տարին ֆային համաձայնությունների — վերադրույքներ, անդամակինարներ): Նման սիստեմատիկ գիտողությունը և հսկողությունն ոգնելու յե՛ վերացնելու միջոցների վոչ լրիվ հավաքումը թե վարձողներից և թե միության անդամներից: Վերաստուգիչ հանձնաժողովը պետք ե միշտ հիշի, վոր անդամ այնպիսի չնչին պակասորդը հավաքման մեջ, ինչպիսին ե մեկ կամ յերկու տոկոսը այս կամ այն միջոցներից, մեր ամբողջ միության մասշտաբով կազմում ե տասնյակ և հարյուր հազարավոր ռուբլիներ:

Թեկուզ մի քանի տոկոսով պակասեցնելով միջոցների գանձման անկանոնությունները, վերաստուգիչ հանձնաժողովը հենց դրանով ավելացնում ե միության գանձարկղի զորությունը:

ՄԻԶՈՑՆԵՐԻ ՄԻՍՍԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Այժմ դառնանք միության միջոցների միաման ստուգմանը:

Այդ միջոցների միաումը կատարվում ե գյուղբանկում՝ նախորոք վորոշված դրամական (ֆինանսական) պլանի համաձայն: Այդ պլանը հանդիսանում ե նախահաշվը (սմետան), վորի մեջ ցույց են տրվում

գյուղբանկումի մուտքն ու յելքը: Նախահաշիվը նախ հաստատում ե միության անդամների ընդհանուր ժողովը և դրանից հետո արդեն ույցոնական կոմիտեն, գավառային և կամ շրջանային բաժինը: Գյուղբանկումն իրավունք չունի ավելի ծախսելու նրանից, ինչ վոր հաստատված ե նախահաշվի համաձայն: Գյուղատնտեսական և անտառագործական բանվորների միության համամիութենական հինգերորդ համագումարը վորոշեց, վոր նախահաշվից ավել արված ամեն մի ծախս պետք ե դիտվի վորակես միության միջոցների վատնում, իսկ միութենական մարմինների ղեկավարները պետք ե յենթարկվեն միութենական պատասխանատվության: Այդ պատճառով ել նախահաշվից ավել վոչ մի ծախս կատարել չի կարելի: Այն դեպքում, յերբ գործի ոգտավետության տեսակետից անհրաժեշտ ե կատարել այս կամ այն ծախսը, գյուղբանկումը պետք ե կազմի լրացուցիչ նախահաշիվ և հաստատել տա միության անդամների ընդհանուր ժողովում ու ույցոնական կոմիտեյում: Այդպես պետք ե լինի միության միջոցների միաման կարգը:

Վերաստուգիչ հանձնաժողովը խստորեն պետք ե ստուգի, թե գյուղբանկում ինչպես ե պահպանում այդ կարգը: Ամեն մի շեղումն այդ կարգից և այդ շեղումներն առաջացնող պատճառները պետք ե մանրամասն քննության առնվեն վերաստուգիչ հանձնաժողովի կողմից, վորպեսզի դրանց վերացման համար համապատասխան առաջարկներ արվեն գյուղբանկու-

մին: Յուրաքանչյուր վերաստուգման ժամանակ, վերաստուգիչ հանձնաժողովը պետք է ուշադրություն դարձնի, թե զյուղբանկոմը ինչպես է ծախսում միջոցները ըստ նախահաջիլի:

ԳՅՈՒՂԲԱՆԿՈՄԸ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՍՏՈՒԳԵ ԳԱՆՁՈՂՆԵՐԻ ՑԵՎ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՀԱՇԻՎՆԵՐԸ

Միջոցների ստացման և նրանց միսաման կարգի ստուգման հետ մեկտեղ, հարկավոր ե նմանապես ստուգել նաև գանձողների և ռայոնական կոմիտեյի հետ փոխադարձորեն հաշիվները մաքրելու կարգը:

Վերաստուգիչ հանձնաժողովը առանձին խստությամբ պետք է ստուգման յենթարկի գանձողների հետ փոխադարձորեն հաշիվները մաքրելու կարգը: Այստեղ առաջին հերթին պետք է պարզել գանձողների հետ փոխադարձորեն հաշիվները մաքրելու այն կարգը, վոր սահմանել ե գյուղբանկոմը: Այդ կարգը կարող ե լինել հետևյալը — կամ գանձողները միջոցները (փողերը) հանձնում են վորոշ որ՝ ամիսը մի անգամ, կամ նրանք հանձնում են այդ միջոցները՝ նայած թե իրենց մոտ այս կամ այն գումարն ինչ չափով ե կուտակվում, և կամ միության անդամների աշխատավարձի յուրաքանչյուր ստացումից 3—4 որ հետո: Այս բոլոր գեպքերում ել վատնման հնարավորությունները կանխելու համար հարկավոր ե ստուգել, թե վոր չափով ե իրագործվում ցույց տրված

կարգը: Ծատ հաճախ այնպես ե լինում, վոր գյուղբանկոմը չի հետեւում գանձողների հավաքած անդամավճարների, անգործներին ոգնություն ցույց տալու համար արված մուծումների կամ վարձողներից ստացած գումարների կանոնավոր գանձմանը: Գանձողները զգալով, վոր իրենց վրա հսկողություն չկա, ծախսում են մի քանի ոութիվ իրենց կարիքների համար, հուսալով ծածկել այդ ծախսն աշխատավարձն ստանալու ժամանակ: Աշխատավարձն ստանալու ժամանակ մեկ ել տեսար՝ հանդես յեկավ մի վորեե ուրիշ կարիքը: Վերցրած փողերը մնացին առանց հանգցնելու (ծածկելու): Մեկ ել տեսնում ես գանձողը վերցրեց ելի մի քանի ոութի, գումարը շատացավ, ավելացավ — նրան հանգցնելն արդեն դժվարանում ե: Իսկ այնուհետեւ — նա ձեռքը թափ տալով ասում ե — միենույն ե, հաշիվը մեկ ե՝ պատասխանել 5 ո. համար, թե 10 ոութիու համար — և այդպիսով մարդը ծախսում ե միության փողերը մինչև այն ժամանակ, քանի չեն հայտնաբերում վատնումը: Սրանից յերեւում ե, վոր փոխադարձաբար հաշիվները մաքրելու վատ կարգը ծնում ե վատնողները:

Ռայոնական կոմիտեյի հետ ևս փոխադարձորեն հաշիվները մաքրելու կարգը պետք է մանրամասն և ուշադրությամբ ստուգվի: Միության անդամներից գանձված անդամավճարները, միության անգործ անդամներին ոգնություն ցույց տալու համար արված կամավոր մուծումները և մի շարք ուրիշ կամավոր

գանձումները պետք ե հանձնվեն ռայոնական կոմիտեյին ամբողջությամբ և ուղիղ այն ժամանակամիջոցում, վոր տվյալ գյուղբանկոմի համար սահմանել ե ռայոնական կոմիտեն։ Վերաստուգիչ հանձնաժողովը պետք ե ստուգի — արդյոք փողերը հանձնվում են սահմանված ժամանակամիջոցում, թե ընդհակառակը, յերկար ժամանակ մնում են գյուղբանկոմում, կուտակվելով և կազմելով խոշոր գումարներ։

Շատ հաճախ պատահում ե, վոր զավմասի կոմիտեյին հասանելիք կամ կուլտաշխատանքների համար նախատեսնված փողերը գյուղբանկոմը միսում է յուր սեփական կարիքների համար։ Միսելով այդ փողերը, գյուղբանկոմը հենց դրանով թուլացնում է վարձողներից վերադրույքները հավաքելու յուր աշխատանքը և բավարար չափով կուլտուրական աշխատանք չի տանում։ Իսկ միենույն ժամանակ զավմասի կոմիտեն յուր ժամանտկին և ամբողջությամբ գյուղբանկոմից չստանալով իրեն հասանելիք փողերը, ստիպված է յուր սեփական ծախսերի համար միսել կամ այն փողերը, վորոնց նա պետք է տար արհմիութենական վերադաս մարմիններին, և կամ կուլտֆոնդի փողերը, զրանով թուլացնելով վերադաս կազմակերպությունների բյուջեն և կուլտաշխատանքը ռայոնում։ Այսպիսով գյուղբանկոմին չպատկանող միջոցների պահումը գյուղբանկոմում, անդրադառնում է միութենական վերադաս բոլոր որգանների ղրամական կացության վրա, մինչև իսկ մեր միության կենտրոնի վրա։ Ահա թե

ինչու անհրաժեշտ ե վոր վերաքննիչ հանձնաժողովն ամենայն խստությամբ ստուգի փոխադարձորեն հաշիվերի մաքրելը և աշխատի, վոր գյուղբանկոմն իրեն չպատկանելիք փողերը յուր մոտ չպահի և չծախսի։

ՅԵԼՅԵՎՏԱՅԻՆ ՓԱՍՏԱԲՂԹԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Յելյմտային փաստաթղթերի ստուգումը կատարվում է յերկու տեսակետից — ամբողջ ստացված և միսված գումարների խստագույն հաշվառման տեսակետից և այդ գումարների ճիշտ ու նպատակահարմար ծախսելու տեսակետից։

Այդ պետք է կատարվի հետեւյալ ձևով։ Վերցվում է գյուղբանկոմի ղրամարկղային պահանջագրքույկը, վորի մեջ գյուղբանկոմը զրում է յուր ստացած և միսած բոլոր գումարները՝ պահանջագրքույկում տպված մուտքի ու յելքի դասավորման համաձայն, և ստուգումը սկսվում է այդ ղրամարկղային պահանջագրքույկի, մուտքի մասից։

Դրամարկղային պահանջագրքույկը ունի յերեք բաժին։ Առաջին բաժնում գրվում են այն միջոցները, վոր գյուղբանկոմն ստանում է վարձողներից ըստ աշխատանքային պայմանագրերի և տարիփային համաձայնությունների։ յերկրորդում — կուլտաշխատանքին հատկացված միջոցները, յերրորդում — ռայոնական կոմիտեյին հանձնվելիք միջոցները։

Գոյություն ունի որենք, վոր յուրաքանչյուր գումար, վորտեղ ել նա նշանակված լինի, մուտքի թե յելքի մեջ, պետք ե հաստատի արդարացուցիչ փաստաթղթով։ Առաջին հերթին պետք ե ստուգել առաջին բաժինը։ Առաջին բաժնի համար վորպես արդարացուցիչ փաստաթուղթ հանդիսանում ե կտրոնագրքույկը, վորով գյուղբանկոմն վարձողներից գանձում ե վերադրույքները։ Որինակ, յենթագրենք տվյալ ամսի 1—3 թվերի սյունակում ցույց ե տրված 10 ոռութիւնա նշանակում ե, վոր գյուղբանկոմն այդ որերից մեկում վարձողներից փող ե ստացել և հետեւապես, նրանց կտրոն ե տվել։ Հարկավոր ե կտրոնագրքույկում կտրոնների արմատների համաձայն հաշվել այդ յերեք որվա ընթացքում ստացած գումարը։ Յեթե հաշիվ տեսնելուց հետո ստացված գումարը համապատասխանում ե այն գումարի հետ, վորն այդ յերեք որվա ընթացքում գրված ե գրամարկղի պահանջագըրքույկում, նշանակում ե՝ գրվածը ճիշտ ե։ Անելով մի պայմանական նշան, վոր ցույց տա թե կտրոնը գըրված ե, անցնել ամսի 4—6 թվերի հաջորդ սյունյակին և այդպես վարվել բոլոր տաս սյունյակների վերաբերմամբ։ Յեթե գյուղբանկոմը գործածում ե մուտքի որդերներ, իսկ զանձողները — կտրոնագրքույկներ, ապա վորպես արդարացուցիչ փաստաթուղթ հանդիսանում են մուտքի որդերները և վերջիններիս կցված՝ գանձողների կտրոնների պատճեները։ Կտրոնագրքույկը պատճենահան թղթի միջոցով գրվում ե 3 որինակով։

մեկը հանձնվում ե վարձողին, յերկրորդը տրվում ե գյուղբանկոմ և կցվում մուտքի որդերին, իսկ այստեղ, ուր մուտքի որդերներ չկան, ուղղակի կցվում ե արդարացուցիչ փաստաթղթերի գործին, իսկ յերրորդ որինակը մնում ե կտրոնագրքույկի արմատի վրա։ Ճիշտ նույն ձեռվ ե կատարվում նաև յերկրորդ բաժնի ստուգումը, — այսինքն կուլտաշխատանքին հատկացված միջոցների ստուգումը։ Վորպես արդարացուցիչ փաստաթղթեր ծառայում են դարձյալ կտրոնագրքույկը կամ մուտքի որդերները։

Այս բաժնի (յերկրորդ բաժնի) ստուգման դեպքում հարկավոր ե նախորոք պարզել, թե գյուղբանկոմը վարձողներից ստացած յուրաքանչյուր սուբլուց վորքան ե հատկացնում կուլտաշխատանքի համար։ Ռայոնական կոմիտեն յուրաքանչյուր կիսամյակի համար հաստատելով գյուղբանկոմի նախահաշիվը, նրա համար սահմանում ե կուլտաշխատանքներին հատկացումներ անելու այս կամ այն տոկոսը։ Յենթադրենք թե տվյալ կիսամյակում գյուղբանկոմը կուլտաշխատանքների համար պետք ե հատկացնի 20%, ապա կտրոնում պետք ե ցույց տրվի, վոր վարձողից ստացված ե, որինակի համար, մի ոռոքի, վորից 20 կոպեկը տրվում ե կուլտաշխատանքների համար։

Սակայն գյուղբանկոմը յուրաքանչյուր կտրոնում կարող ե և ցույց չտալ, թե ստացված գումարից վորքան ե գնում կուլտաշխատանքի համար։ Նա կարող ե այդ անել ամիսը մի անգամ, ամսի 30—31-ին,

հետևյալ ձևով. հաշվում ե, թե աշխատանքային պայմանագրերի համաձայն ընդամենը վորքան գումար ե հավաքված վարձողներից և այդ գումարից դուրս ե գալիս 20%: Որինակ, յենթաղբենք հավաքված ե 45 ռուբլի. այդ գումարի 20%-ը կազմում ե 9 ռուբլի ($\frac{45 \cdot 20}{100}$): Այդ 9 ռուբլու համար գյուղբանկոմը դուրս ե գրում մուտքի որդեր և այդ գումարը նշանակում է գրամարկղի պահանջագրքույկի 9-րդ սյունյակում. միևնույն ժամանակ այդ նույն գումարի համար դուրս ե գրում նաև միսման (ծախսի) որդեր և, գրամարկղի պահանջագրքույկի առաջին բաժնի համաձայն, դա գրում ծախսի մեջ նույն 9-րդ սյունյակում:

Տեղին ե շեշտել, վոր դա բոլորովին չի ազդում գանձարկղի մնացորդի վրա: Դրանում համոզվենք որինակի վրա: Յենթաղբենք թե գյուղբանկոմը ստացել և ընդամենը 200 ռուբլի, իսկ ծախսված ե 100 ռ., Սակայն դեռ հարկավոր ե կուլտֆոնղի համար վորոշ տոկոս դուրս գալ: 200 ռուբլուց դուրս զանք 20%, կուլտֆոնղի մուտքում գրենք 40 ռուբլի և գյուղբանկոմին պահելու բաժնի ծախսում ևս 40 ռուբլի: Այսպիսով մուտքը լինելու յե՝ $200 + 40 = 240$ ռուբլի, իսկ յելքը, $100 + 40 = 140$ ռուբլի: Գանձարկղի մնացորդը նույն 100 ռուբլին ե, վոր կար այդ նշանակումներից առաջ:

Մի քիչ այլ կերպ պետք ե ստուգվի գրամարկային պահանջագրքույկի Յ-րդ բաժինը: Այստեղ վերաստուգիչ հանձնաժողովը պետք ե ստուգի վոչ միայն

այն, թե արդյո՞ք ճիշտ են գրված մուտքի որդերները, այլև այն, թե միության անդամների հաշվառման գրքույկում, կամ միության անդամի անձնական քարտում, արդյոք արված են նշանակումներ անդամավճարների վճարման մասին: Այդ նշանակումները կատարվում են այն պահանջագրքույկների հիման վրա, վորոնցով գանձվում են անդամավճարները: Կարող ե պատահել, վոր միության անդամից անդամավճարներն ստացված են, բայց հաշվառման գրքույկում վոչինչ նշանակված չե: Հետևապես, անկանոն վճարողների քանակը սխալ ե ցույց տրված: Այդպիսի ստուգումը վերաստուգիչ հանձնաժողովին հնարավորություն ե տալիս ավելի ճշգրիտ կերպով պարզել — ինչ գրության մեջ ե գտնվում անդամավճարների գանձման գործը, վորի մասին մենք ասացինք վերևում:

Յերբեմն հարկավոր ե միության անդամների անդամատոմսերը ևս նայել: Դրա համար հարկավոր ե վերաստուգությունը սկսելուց առաջ միության մի քանի անդամից վերցնել անդամատոմսերը և ստուգել՝ թե արդյոք անդամատոմսի մեջ գրված են այն փողերը, վոր ամդամավճարների գանձման պահանջագրքույկում նշանակված են վորպես ստացված, և, ընդհակառակը, անդամավճարների գանձման պահանջագրը գրքույկում կամ միության անդամների հաշվառման գրքույկում արդյո՞ք նշանակված ե այն, ինչ վոր գըրված ե անդամատոմսի մեջ: Այդ բոլորն արվում ե նրա համար, վորպեսզի համոզվել, թե արդյոք գան-

ձողներն իրենց հավաքած անդամավճարները ճիշտ են հանձնում և այստեղ չկա արդյոք վորևե չարաշահություն:

Այսպիսով, ստուգելով ամբողջ մուտքը և համոզվելով գրվածների ճշտության մեջ, անհրաժեշտ ե անցնել դրամարկղի պահանջագրքույթի յելքի մասի ստուգմանը: Այստեղ ստուգումը մի քիչ այլ կերպ ե կատարվում: Անհրաժեշտ ե վոչ միայն համոզվել գրվածների ճշտության և նրանց արդարացուցիչ փաստաթղթերով հաստատելու մեջ, այլ և հարկավոր ե տակավին ստուգել — արդյոք ձևակերպված են իրենք փաստաթղթերը և արդյոք նպատակահարմար են արված այս կամ այն ծախսերը:

Առաջին բաժնի համար վորպես արդարացուցիչ փաստաթղթեր հանդիսանում են՝ գյուղբանկոմից աշխատավարձ ստացող աշխատողի ստորագրությունը կամ ստացականն աշխատավարձ ստանալու մասին, սոցիալական ապահովագրության համար արված մուծումների կտրոնները, վորոնք (մուծումները) վճարվում են այդ աշխատավարձից, գյուղբանկոմի բռնած շենքի վարձը վճարելու հաշիվները և ստացականները (յեթե շենքը կապալով ե վերցրվում, ապա շենքը կապալով վերցնելու համար պետք ե կնքվի պայմանագիր), գրասենյակային պիտույքների համար արված ծախսերի հաշիվները, ուայոնական կոմիտե գնալու համար փոխադրական միջոցների վրա արած ծախսերի ստացականները և այլն: Յերկրորդ բաժնի հա-

մար — կուլտաշխատանքի վրա արած ծախսերի հաշիվները և ստորագրությունները, իսկ յերրորդ բաժնի համար — ուայոնական կոմիտեյի կտրոններն այն մասին, վոր նա իրեն պատկանելիք միջոցները ստացել ե գյուղբանկոմից:

Դրամարկղի պահանջագրքույթի ստուգման հետմիամին ստուգվում ե նաև արված ծախսերի նպատակահարմարությունը: Որինակ, յենթադրենք կարմիր անկյան համար գյուղբանկոմը դուրս ե գրել թանկարժեք մի վորևե հրատարակություն և դրա վրա ծախսել ե համարյա այն բոլոր փողերը, վոր նախահաշվով բաց են թողնված բատրակային միության վերաբերող գրականություն գնելու համար: Այդպիսի միասումն, ի հարկե, աննպատակահարմար ե, և հետեւապես փողերը դրա վրա ծախսված են սխալ կերպով, վորովհետև նախահաշվով այդ փողերը բաց ելին թողնված այս նպատակի համար:

ՍՏՈՒԳԵԼ, ԹԵ ՄԻԶՈՑՆԵՐՆ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՊԱՀՎՈՒՄ

Գյուղբանկոմը յուր բոլոր միջոցները պետք ե պահի խնայողական գանձարկղում կամ տեղական վարկային ընկերության մոտ, նայելով թե այդ հիմնարկներից վորն ե ավելի մոտ գտնվում գյուղբանկոմին: Միջոցները տեղական վարկային ընկերության մոտ պահելու դեպքում պետք ե պայմանագիր կնքվի, թե ինչ պայմաններով ե պահ տրվում: Այդ պայմա-

Նագիրն անհրաժեշտ եւ և դա պետք է գյուղբանկոմի համար հնարավորություն ստեղծի, վոր նա ցանկացած ըոպելին կարողանա ստանալ իրեն պետք յեղած գումարը: Փողերը թողնել գյուղբանկոմի նախագահի և կամ գանձապահի մոտ չի կարելի, վորովետև փողերը կարող են գողացվել կորսվել և, կարող ե պատահել, նույնիսկ ծախսվել սեփական կարիքների վրա:

Այստեղ վերաստուգիչ հանձնաժողովը պետք եռ ուշադրություն դարձնի, վոր դրամարկղի պահանջագըրքույկում չկա այնպիսի հոդված, ըստ վորի գյուղբանկոմը նշանակումներ աներ փողերը խնայողական դրամարկղը մուծելու և այդ փողերը դրամարկղից ստանալու մասին: Այդպիսի հոդված չի մտցված դրամարկղի պահանջագըրքույկում այն նպատակով, վորպեսզի չքարդացվի միջոցների հաշվառումը: Դրանից իհարկե գործը բոլորովին չի տուժում՝ յեթե փողերը պահվում են խնայողական դրամարկղում, քանի վոր գյուղբանկոմը յուր մոտ ունի գրքույկ, վորի մեջ խնայողական դրամարկղը գրում ե, թե յերբ և վճրքան փող ե հանձնված իրեն, յերբ և վհրքան գումար ե յետ վերցրել գյուղբանկոմը: Գրքույկի միջոցով միշտ ել կարելի յե իմանալ, թե վորքան փող ե գըտնվում դրամարկղում: Յենթադրենք թե դրամարկղային պահանջագըրքույկի համաձայն փողերի մնացորդը գյուղբանկոմի մոտ պետք ե լինի 100 ոռոբի: Նա կանխիկ փողի փոխարեն վերաստուգիչ հանձնաժողովին ներկայացնում ե խնայողական դրամարկղի հաշ-

վեգրքույկը (расчетная книжка), վորի մեջ մնացորդը միկնույն որում նույնպես 100 ոռոբի յե: Նշանակում ե ամեն ինչ լավ ե: Սակայն կարող ե պատահել, վոր խնայողական գրքույկում ցույց ե տրված վոչ թե 100, այլ 80 ոռոբի մնացորդ: Այն ժամանակ դա նշանակելու յե, վոր 20 ոռոբի պակասում ե և այդ արդեն պետք ե դիտել վորպես միության միջոցների վատնումն:

ԳՅՈՒՂԲԱՆԿՈՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՅԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՆԵՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Վերաստուգիչ հանձնաժողովը պետք ե ստուգի նաև այն, թե գյուղբանկոմն ինչպես ե տանում յուր գործավարությունը: Այստեղ հարկավոր ե պարզել — արդյոք կանոնավոր են նրա աշխատանքային պայմանագրերը, արդյոք լավ ե տարգում միության անդամների հաշվառումը, արդյոք չկան «մեռած հոգիներ», այսինքն միության այնպիսի անդամներ, վորոնք գրքի մեջ կան, իսկ իրականում վաղուց ե վոր մեկնել են ուրիշ ուայոն, արդյոք կանոնավոր են արձանագրությունները և առհասարակ գրագրության գործը:

Մտուգումից չպետք ե աղատվի և գյուղբանկոմի տնտեսական աշխատանքը: Այդ տնտեսական աշխատանքը կայանում ե գյուղբանկոմի գրասենյակի, կարմիր անկյան և կամ բատրակի անկյան համար վորեւ ինվենտար ձեռք բերելու, դրանք պատշաճ

կերպով պահելու և ոգտագործելու մեջ։ Վերաստուգման ժամանակ հարկավոր ե պարզել — արդյոք կատարվում ե գույքի մանրամասն հաշվառվում։ Դյուղբանկոմի ձեռք բերած բոլոր իրերը (զանազան գրքեր, սեղաններ, աթոռներ, պահարաններ, կարմիր անկյան և կամ բատրակի անկյան սարքավորում, նվազի գործիքներ — թառեր, թմբուկներ, ջութակներ և այլն, գործիքներ ֆիզկուլտուրայի համար — սահնակներ, գնդակներ, հրացաններ, փամփուշտներ և այլն) պետք ե գրվեն գույքացուցակի մեջ։ Վերաստուգիչ հանձնաժողովը ուշադրություն պետք ե դարձնի նաև նրա վրա, թե արդյոք տնտեսողաբանը ե ոգտագործվում ու պահվում միության գույքը, և այդ մասին յուր դիտողությունն անի վերաստուգման ակտի մեջ։

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ ԳՅՈՒՂԲԱՆԿՈՄԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Վերաստուգիչ հանձնաժողովների մասին գոյություն ունեցող կանոնադրության համաձայն վերաստուգիչ հանձնաժողովը պետք ե յուր յեղբակացությունը տա գյուղբանկոմի դրամական և նյութական հաշվետվությունների մասին։ Սակայն ամենից առաջ անհրաժեշտ ե պարզել, թե ինչ ե ներկայացնում իրենց դրամական, կամ ինչպես ընդունված ե ասել, գյուղբանկոմի ֆինանսական (դրամական) հաշվետվու-

թյունը, իսկ դրանից հետո արդեն անցնել նրան, թե ինչպես պետք ե տալ յեղբակացությունը։ Ֆինանսական հաշվետվությունը բոլոր պրոֆմիություններում, բոլոր որգաններում, այդ թվում նաև գյուղատնտեսական և անտառագործական բանվորների (օչխօզլեսրածուխ) միության (հողանտառմիության) գյուղբանկոմիաներում, իրենից ներկայացնում ե ուրիշ վոչնչ, բայց յեթե իսկական պատճենը գրամարկի պահանջանջադրքույթի, այդ միակ գրքույկի, վորը գոյություն ունի բոլոր տեսակի մուտքերի և յելքերի դրամական ուղերացիաների հաշվառման համար։ Դրամարկղի պահանջագրքույթիում արված նշանակումները ճշգրիտ կերպով արտացոլելու և հեշտությամբ կազմելու համար ե հարմարեցված ինքը հաշվետվության բովանդակությունը և ձեռք նրանում ճշգրիտ և տառացի կերպով ամբողջապես տպված ե նույն բանը, ինչ և դրամարկղի պահանջագրքույթիում ե։ Նման հաշվետվություն կազմելու համար միայն պահանջվում ե դրամարկղի պահանջագրքույթի վերջին յերեք սյունյակների ընդհանուր գումարները փոխադրել այն թվի (ամսաթվի) վրա, յերբ հաշվետվությունը կազմվում ե։ Դրանումն ե կայանում պրոֆմիությունների ֆինանսական հաշվետվության առանձնահատկությունը։ Այդպիսի հաշվետվության մասին յեղբակացություն տալը վոչ մի դժվարություն չի ներկայացնի, յեթե վերաստուգիչ հանձնաժողովը վերաստուգումները կատարել ե ամեն ամիս։

՚իրա համար հարկավոր ե ֆինանսական հաշվետվությունը միայն համեմատել դրամարկղի պահանջագրքույկի հետ և համոզվել թվերի փոխադրման ճշտության մեջ, իսկ այնուհետև նայել յուր ակտերը, վորոնց մեջ զրված են վերաստուգումների ժամանակ հայտնաբերված թերությունները։ Յեթե մինչև հաշվետվությունը կազմելը այդ թերությունները չեն վերացված, ապա հարկավոր ե դրանց զրել յեզրակացության մեջ։ Որինակի համար, յենթադրենք առաջ հայտնաբերված ե յեղել, վոր միութենական փողերը պահպում են գյուղբանկոմի նախագահի մոտ. վերաստուգիչ հանձնաժողովն առաջարկել ե այդ փողերը պահել պետական խնայողական գանձարկղում։ Հաշվետվության մասին յեզրակացություն տալու ժամանակ պարզվում ե վոր հաշվետվության մեջ ցույց տված դրամարկղի մնացորդը այժմ ել գտնվում ե նախագահի մոտ. նշանակում ե առաջարկը չի իրագործված։ Այժմ զրենք որինակելի յեզրակացություն այնտեղ, ուր ֆինանսական հաշվետվության մեջ դրա համար տեղ ե հատկացված. — վերաստուգիչ հանձնաժողովը (այս ինչ այն ինչ անդամների կազմով), ստուգելով այս հաշվետվությունը, նկատում ե, վոր դրամարկղի պահանջագրքույկից ընդհանուր գումարների փոխադրությունը ճիշտ ե կատարված, վոր, չնայած ակտում առաջարկությանը (այս ինչ թվին), փողերը տակալին պահպում են գյուղբանկոմի նախագահի մոտ և վոր վերադրույքներն ըստ աշխատանքային

պայմանագրերի հավաքված են (այսքան ոռոքով) պակաս, քան պետք եր հավաքել հաշվետու շրջանի ժամկետներում, և այլն։

Իսկ յեթե վերաստուգիչ հանձնաժողովը վոչ մի վերաստուգում չի կատարել այն ժամանակվա ընթացքում, վորի համար կազմված ե հաշվետվությունը, ապա նա յեզրակացություն տալ չի կարողանալու, և այդ դեպքում յեզրակացություն տալը շատ դժվար ե լինելու։ Հարկավոր ե կատարել վերաստուգություն, ստուգել միջոցների մուտքը և յելքը դրամարկղի պահանջագրքույկում, ստուգել անդամակների, վերադրույքների գանձման կարգը, մի խոսքով հարկավոր ե ստուգել գյուղբանկոմի ֆինանսական ամբողջ աշխատանքը։ Իսկ ստուգել ֆինանսական ամբողջ աշխատանքը մի անգամից արդեն ավելի դժվար գործ ե, քան աշխատանքի սիստեմատիկ ստուգումը։ Վոչ մի դեպքում չի կարելի յեզրակացությունը ձեականորեն տալ՝ թե հաշվետվությունը ճիշտ ե կազմված։ Այդպիսի յեզրակացությունը, ծածկելով գործերի խոկական դրությունը, միայն վաստ կարող ե բերել։

ՎԵՐԱՍՏՈՒԳԱՆ ԱԿՏ

Գյուղբանկոմի վերաստուգման ակտը խոշոր նշանակություն ունի։ Նա հանդիսանում ե մի փաստաթուղթ, վորի հիման վրա ուսուցական կոմիտեն դատում ե գյուղբանկոմի ֆինանսական, տնտեսական և վարչական աշխատանքների դրության մասին։

Դարձյալ նույն ակտի միջոցով ե գավմասի կոմիտեն յեզրակացության գալիս այն մասին, թե վերաստուգիչ հանձնաժաղովը սխալ թե ճիշտ ե կատարել վերաստուգումը, և հետևապես, սխալ թե ճիշտ ե հասկանում յուր ինդիբները վերաստուգիչ հանձնաժողովը՝ Բացի դրանից, գավմասի կոմիտեն կարող ե զյուղբանկոմին ցուցմունքներ տալ ակտում գրված թերությունները վերացնելու առթիվ, անգամ այն դեպքում, յեթե նույնիսկ վերաստուգիչ հանձնաժողովն այդ թերությունները վերացնելու մասին չի արել համապատասխան առաջարկություններ:

Ակտը պետք ե կազմվի մտածված կերպով, նրանում մի ընդհանուր հայտարարի պետք ե բերվի զյուղբանկոմի կատարած ամբողջ աշխատանքը: Վոչ մի դեպքում ակտի մեջ չի կարելի դրել ընդհանուր այսպիսի ֆրազներ՝ «ստուգելով գյուղբանկոմի փինանսական աշխատանքը, վերաստուգիչ հանձնաժողովը գրանում ե այն բավարար»: Գործերի լավ լինելու դեպքում անգամ հարկավոր ե ակտը դրել այնպես, վորպեսզի նրանում գրված փաստերն իրենք ասեն գործերի լավ լինելու մասին:

Իսկ ի՞նչպես ե հարկավոր կազմել ակտը և ի՞նչ ե հարկավոր անպայման գրել նրանում: Ակտի կազմելն սկսելուց առաջ, հարկավոր ե հավաքել այն բոլոր դիտողությունները, վոր արել են վերաստուգիչ հանձնաժողովի առանձին անդամները կամ բոլորը միասին, կուեկտիվ կերպով: Պետք ե հավաքել անհրաժեշտ մա-

տերիալները և թվերը: Այդ բոլորը կատարելով հարկավոր ե դրանց քննել՝ համոզվելու համար, թե գործերը գյուղբանկոմի փինանսական ու տնտեսական աշխատանքի վոր մասում ինչպես են դրված: Դրանից հետո արդեն պետք ե անցնել ակտի կազմելուն: Առաջին հերթին դրվում ե ակտի վերնագիրը, իսկ այնուհետև սկսվում է գործի եյության շարադրումը: Այստեղ ներքեւում բերում ենք գյուղբանկոմի վերաստուգման և վերաստուգիչ հանձնաժողովի արած առաջարկությունների մի որինակելի ակտի (արձանագրության) ձև:

Ա. Կ Տ

1927 թ., հուլիս 5. — Մենք, ներքո ստորագրողներս՝ Հայկավանի գյուղբանկոմի վերաստուգիչ հանձնաժողովի անդամներս — Ս. Մարկոսյանը, Գ. Պետրոսյանը և Կ. Պողոսյանը, գյուղբանկոմի նախագահ Ա. Սարգսյանի ներկայությամբ ստուգելով գյուղբանկոմի փինանսական և տնտեսական աշխատանքը, գտանք՝

1) բոլոր միջոցների մուտքը, հաշված և մնացորդն առ 1-ն հուլիսի, կազմում ե 675 ռուբլի, իսկ ծախար՝ 575 ռուբլի: Մնացորդն առ 1-ն հուլիսի հավասար ե 100 ռուբլու: Գյուղբանկոմի նախագահը ներկայացրեց փողերով՝ 90 ռուբլի, իսկ մնացած 10 ռուբլու փոխարեն՝ գյուղբանկոմի անդամ Գ. Պետրոսյանի ստացականը, արված սույն թվի մայիսի 1-ն: Պետրոսյանին այդ փողերը արված են փոխադարձաբար: Փողերը չեն

պահվում ինայողական գրամարկում, այլ գտնվում
են գյուղանկոմի նախագահ Ա. Սարգսյանի մոտ:

2) վերոհիշյալ գումարները՝ ինչպես մուտքը, այն-
պես ել յեղը՝ հաստատվում են արդարացուցիչ փաս-
տաթղթերով։ Փաստաթղթերը գտնվում են կանոնավոր
վիճակի մեջ, կարգած են գործում, և պահվում են
յերկաթե արկղի մեջ գյուղբանկոմում։

3) նախահաշվով նախատեսնված ե յեղել սույն
թվի առաջին կիսամյակում (հունվարի 1-ից մինչև
հուլիսի 1-ը), ըստ աշխատանքային պայմանագրերի,
վարձողներից ստանալ 150 ռուբլի։ Սակայն այդ ժա-
մանակամիջոցում ստացված ե միայն 100 ռուբլի։ Զի
ստացված 50 ռուբլի։ Պակաս ստանալու պատճառները
կայանում են նրանում, վոր գյուղբանկոմը 6 վարձո-
ղեց չի պահանջել՝ վճարել պայմանագրում սահ-
մանված ժամկետներում և ստորագրությունով նրանց
չի պարտավորել՝ վճարել ամենամոտիկ ժամանակա-
միջոցում։

4) նախահաշվի յեղի մասը իրականացված ե
այսպես՝

նախահաշվով հաստատված ե	միսված ե փաստորեն	միսված ե ավել
Ուրիշ գործերից աղատ- ված աշխատակցի աշխա- տավարձի համար 120 ռուբ.	140 ռուբ.	20 ռուբ.
Տնտեսական ծախսերի համար 30 > 35 > 5 >		
Առաքումների համար 30 > 45 > 15 >		
Հատկացումներ կուլտ-		
ֆոնդի համար 40 > — —		

40 ռուբլի ավել կատարված ծախսը արված ե
կուլտֆոնդի հաշվին։ Ավել կատարված ծախսն աշխա-
տավարձի գծով բացատրվում ե նրանով, վոր նախա-
գահը յուր ոռօնիկն ստացել ե մի ամիս առաջ. տնտե-
սական ծախսերի գծով նրանով, վոր գրասենյակային
զանազան պիտույքներ գնված են նաև հաջորդ կիսամյակի
համար, իսկ առաջումների (ճանապարհածախալի) գծով՝
նրանով, վոր գավմասի կոմիտեի անդամները 6 անգամ
գնալու փոխարեն գնացել են 9 անգամ։ Կուլտաշխա-
տանքի համար հատկացված ե յեղել ընդամենը 80 ռ.,
իսկ փաստորեն այդ նպատակի համար ծախսվել ե 40 ռ.,
վորովհետև կուլտֆոնդի մուտքում նախատեսնված ե
յեղել գյուղբանկոմին պահելու ծախսերից կուլտաշ-
խատանքի համար հատկացնել 40 ռուբլի, բայց գյուղ-
բանկոմն այդ հատկացումը չի արել։

5) առաջին կիսամյակի ընթացքում 100 ռուբլի
անդամավճար ե հավաքված, իսկ հանձնված ե գավ-
մասի կոմիտեյին 85 ռուբլի։ 15 ռուբլի չի հանձնված
այն պատճառով, վոր այդ գումարը փոխադարձաբար
տրված ե գյուղբանկոմի անդամ կ. Թորոսյանին։ Միու-
թյան անդամների հաշվառման գրքույկը քննելուց
պարզվեց, վոր 3 ամսից ավել անդամավճարները չեն
վճարել 10 հոգի, 3 ամիս — 20 հոգի, 2 ամիս — 15 հոգի,
1 ամիս — 3 հոգի։ Անկանոն վճարելու պատճառները
կայանում են նրանում, վոր գյուղբանկոմը չունի
գանձողներ և հետո նրանում, վոր կես տարվա ըն-
թացքում միության անդամների ժողովներում վոչ մի

անդամ չի բացատրված — ինչի՞ համար են հավաք-
վում անդամավճարները և ով ինչի վրա յե նրանց
ծախսում:

6) գրասենյակային աշխատանքները վատ են կա-
տարվում. աշխատանքային պայմանագրերը գործերում
կարված չեն և պահպում են անխնամ, անփույթ. Նրանց
մի մասը չի գրված աշխատանքային պայմանագրերի
հաշվառման գրքույկում — աշխատողներ վարձող Զա-
քարյանի հետ պայմանագրիրը կնքված ե ապրիլի 20-ին
և մինչև հիմա հաշվառման գրքույկում գրված չե: Միու-
թյան անդամների ուրիշ վայր տեղափոխվելու մասին
նշանակումները կատարված են անկանոն: Այսպես, ըստ
միության անդամների հաշվառման գրքույկի, միու-
թյունը պետք ե ունենա 100 անդամ, իսկ փաստո-
րեն ունի միայն 90 անդամ, 10 հոգի մեկնել են ուրիշ
ռայոն:

7) ինվենտարի ցուցակ չկա, իսկ բատրակի անկյան
համար նոր ձեռք բերված իրերը — թառը, թմբուկը,
ջութակը և ուղիունդունիչը նույնպես վոչ մի տեղ
գրված չեն:

Գյուղբանկումի նախագահ Ա. Սարգսյանն այդ առթիվ
տվեց այսպիսի բացարություն: «Իրերը չեն կորսվի
նաև առանց գրելու, յես դրանք չեմ վերցնելու ինձ հա-
մար»: Գրքույկները և զանազան տեղեկատու-բա-
ռարանները նմանապես հաշվի չեն առնված, իսկ մի
քանիսը հայտնի չե թե ուր են դանվում, որինակ՝
այսինչ գրքույկը:

Յեգրակացություններ

1) Փողերը պահ-
վում են նախագահի
մոտ, վորը դրանք
պարտք ե տալիս
սրան - նրան:

2) Վարձողներից
վերադրույքներն ան-
կանոն են ստացվում:
Զհավաքված խոշոր
գումարներ կան վաւ-
ձողների մոտ:

3) Նախահաշվից
ավել ծախսեր են կա-
տարվում: Կուլտֆոն-
դի համար հատկա-
ցումներ չեն արված:

1) Պահանջել Պետրոսյանից, վոր նա
յեր ու շաբաթվա ընթացքում վճարի
10 ոռուլին: Հետագայում փոխարի-
նաբար վոչ վոքի փող չտալ: Փողերը
պահել խնայողական դրամարկղում:

2) Վարձողներից վերադրույքները
հավաքել կանոնավոր կերպով, պայ-
մանագրում ցույց տված ժամանակա-
միջոցում: Այն վարձողները, վորոնք
բաց են թողնում վճարելու ժամանա-
կը, պահանջել անմիջապես վճարել:
Վճարման հետաձգելը թույլ տալ միայն
բացառիկ դեպքերում, մի շաբաթից վոչ
ավել և անպայման վարձողից վերցնել
ստորագրություն, վոր նա պարտա-
վորվում է ցույց տված ժամանակամի-
ջոցում փողերը մուծել գյուղբանկում:

3) Յերկրորդ կիսամյակի համար
կազմած նախահաշվում նախագահին
աշխատավարձ բաց թողնել միայն
հինգ ամսվա համար, վորովհետև վե-
ցերորդ ամսվա աշխատավարձն արդեն
վճարված ե: Հետագայում թույլ չտալ
աշխատավարձը նախորոք ստանալ:
Վորպեսզի խուսափել ավել ծախսերից
գործուղման գծով, գործուղումներ
կատարել այնքան, վորքան նախա-
տեսնված ե նախահաշվով:

Յերկրորդ կիսամյակում կուլտֆոն-
դի համար կատարվող հատկացումներն

5) Վատ եղիված
գործավարությունը:

6) Ունեցած գույքը
հաշվի չի առնվում:

ավելացնել 40 ռուբլով, վորովինետե
առաջին կիսամյակում այդ գումարը
չի հատկացված կուտֆոնդին:

4) Անդամավճար-
ներն անկանոն վճա-
րողների թիվը շատ եւ

4) Նորաշեն գյուղում նշանակել ան-
դամավճարների առանձին զանձող,
իսկ մյուս գյուղերի վերաբերյալ հանձ-
նարարել գյուղբանկոմի ամեն մի ան-
դամին, վոր նրանք ամիսը մի ան-
դամ, միության անդամների վորոշ
խմբակներից հավաքեն անդամա-
վճարները:

5) Աշխատանքային պայմանագրե-
րը կարել գործին, միության անդամ-
ների տեղափոխությունը նշանակել
կանոնավոր կերպով:

6) Ունեցած գույքը և գրքերը հաշվի
առնել ենրանց համար կազմել առան-
ձին գրքույկ: Նոր ձեռք բերված ամ-
բողջ գույքը կանոնավոր կերպով գրել
այդ գրքույկի մեջ:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ
ՀԱՇԻՎ ՏԱ ՅՈՒՐ ԸՆՏՐՈՂՆԵՐԻՆ

Վերաստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը ըն-
տրողների առաջ չպետք ե սահմանափակվի վերըն-
տրությունների ժամանակ տեղի ունեցող հաշվետվու-
թյուններով: Հարկավոր ե հաշվետվություններ կա-
տարել վորքան հնարավոր ե ավելի հաճախ, այն նպա-
տակով, վորպեսողի միության անդամները կարողանան
վերաստուգիչ հանձնաժողովին ցուցմունքներ անել
գյուղբանկոմի ֆինանսական ու վարչական - տնտեսա-
կան և հենց իր՝ վերաստուգիչ հանձնաժողովի աշխա-
խատանքի մեջ նկատվող թերությունների մասին:

Հաշվետվությունը կարող ե կատարվել միության
անդամների ընդհանուր ժողովում զեկուցումներ անե-
լով գյուղբանկոմի ֆինանսական ու վարչական - տըն-
տեսական աշխատանքի դրության և հենց իր՝ վերա-
ստուգիչ հանձնաժողովի աշխատանքի մասին: Կարելի
յե հաշիվ տալ նաև հարակից զեկուցում անելով գյուղ-
բանկոմի զեկուցման այն մասի առթիվ, վորը վերա-
բերում ե գյուղբանկոմի ֆինանսական ու վարչական-
տնտեսական աշխատանքին: Վերջապես հաշիվ տալ կա-
րելի յե՝ պատի թերթում հողվածներ և դիտղությու-
ներ զետեղելու միջոցով. այդ թերթում պետք ե
գրել, թե վերաստուգիչ հանձնաժողովը ինչպիսի
թերություններ ե հայտնաբերել և ինչպիսի առա-

Հարկություններ են արված այդ թերությունները
վերացնելու համար:

Յեթե վերաստուգիչ հանձնաժողովը գյուղբանկոմի
ֆինանսական աշխատանքում հայտնաբերել է ամբողջ
միության համար նշանակություն ունեցող վորեւ
բան—լինի դա գրական կամ բացասական (որինակ՝
խոշոր վատնում և այդ վատնման բնութագրական պատ-
ճառները, կամ անդամավճարների և վերադրույթ-
ների գանձումը 100% -ով՝ շնորհիվ գյուղբան-
կոմի կիրառած գանձման հաջող մեթոդների և
այլն), — ապա այդ մասին անհրաժեշտ ե գրե
«Բատրակ» թերթին:

Վերընտրություններից առաջ, միության անդամ-
ների հաշվետու ժողովում, վերաստուգիչ հանձնաժո-
ղովը հաշիվ ե տալիս այն աշխատանքի մասին, զոր
նա կատարել ե յուր լիազորության ամբողջ ժամա-
նակամիջոցում։ Հետևապես, վերաստուգիչ հանձնա-
ժողովը պետք ե յուր աշխատանքը մի ընդհանուր
հայտարարի բերի, այսինքն հաշվի, թե քանի վերա-
ստուգումներ ե կատարված և ինչ ե յերեան բերված
այդ վերաստուգումների ժամանակ, բնչափսի հարցերի
առթիվ և քանի առաջարկություններ ե արված գյուղ-
բանկոմին և վերջինս այդ առաջարկներն ինչպես ե
իրագործել, այդ առաջարկություններն անելուց հետո
լավացել ե արդյոք դրամական աշխատանքը։ Այդպիսով
ամբողջ աշխատանքը մի ընդհանուր հայտարարի բե-
րելով, դժվար չե յեզրակացնել — գյուղբանկոմի դրա-

մական աշխատանքը վերընտրությունների միջոցին
բավարար ե թե անբավարար։

Գյուղբանկոմից հետո վորաստուգիչ հանձնաժողովը
հաշիվ տալով վերընտրիչ ժողովում, յուր ընտրողնե-
րին պետք ե հաղորդի թե իր կատարած աշխատանքի
և թե այն մասին, թե ինչ դրության մեջ ե գտնվում
գյուղբանկոմի վարչա-տնտեսական և գրամական աշ-
խատանքը։ Դրա համար ժողովին պիտի հայտնել։

1) Քանի վերաստուգում ե կատարված։

2) Գյուղբանկոմն ինչպես ե ծախսել փողերը —
կատարել ե արդյոք ավել ծախսեր, թե իիստ կերպով
մնացել ե նախահաշվի սահմաններում։

3) Ինչի վրա յեն ծախսվել փողերը, վորքան՝ գյուղ-
բանկոմին պահելու վրա և վորքան՝ կուլտաշխա-
տանքի վրա։ յեղել են, թե չեն յեղել աննպատակա-
հարմար, զոչ անհրաժեշտ ծախսեր։

4) Արդյոք կանոնավոր կերպով և արդյոք բոլոր վար-
ձողներից ե գյուղբանկոմը ստացել վերադրույթներն
ըստ աշխատանքային պայմանագրերի։ Վարձողների
վրա պարտք կամ և կա արդյոք, և գյուղբանկոմն
ինչպիսի միջոցներ ե ձեռք առել այդ պարտքերը
լուծարքի յենթարկելու համար, արդյոք բավական են
յեղել այդ միջոցները։

5) Արդյոք անդամավճարները լրիվ են հավաքվել և
գյուղբանկոմն այդ անդամավճարները կանոնավոր ե
հանձնել միութենական վերադաս որգանին, նա այդ փո-
ղերը արդյոք չի ծախսել յուր սեփական կարիքների վրա։

6) Ուր և ինչպես են պահպում փողերը, պահելու
այդպիսի կարգն ապահովում ե վոր փողերը չվատնվեն,

7) Կանոնավոր են արդյոք գյուղբանկոմի հաշվա-
ռումը, հաշվետվությունը և գործավարությունը:

8) Ինչպես ե պահպում և ոգտագործվում միու-
թյան գույքը:

9) Վերաստուգիչ հանձնաժողովն ինչպիսի առաջար-
կություններ ե արել նկատված թերությունները վե-
րացնելու համար:

10) Գյուղբանկոմն ինչպես ե իրագործել վերա-
ստուգիչ հանձնաժողովի առաջարկները:

Ահա մոտավորապես այն հարցերը, վոր վերաստու-
գիչ հանձնաժողովը պետք ե պարզաբանի հաշվե-
տվության մեջ, յուր ընտրողների առաջ:

—

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՒՂԵ- ՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1) Միութենական բոլոր որդանների վարչա - տեխ-
նիքական, տնտեսական և դրամական գործնեյության
վերաստուգման համար, համագումարներում, ընդհա-
նուր ժողովներում կամ ձեռնարկությունների ֆաբրիկ-
գործարանային կոնֆերենցիաներում ընտրվում ե վե-
րաստուգիչ հանձնաժողով՝ 3 — 5 անդամի և 2 — 3
թիկնածույի կազմով:

Ծանօթություն. Ֆաբրիկ - գործարանային կոն-
ֆերենցիաներում վերաստուգիչ հանձնաժողովների ընտ-
րություններ կատարվում են այն դեպքերում, յերբ,
համաձայն գործարանային կոմիտեների կանոնադրու-
թյան, միութենական մարմիններ ընտրելու համար
ընդհանուր ժողովները փոխարինվում են ֆաբրիկ - գոր-
ծարանային կոնֆերենցիաներով:

2) Վերաստուգիչ հանձնաժողովը ընտրվում ե միա-
ժամանակ և այնքան ժամկետով, վորքան և իր վե-
րաստուգմանը յենթակա միութենական մարմինը:

3) Վերաստուգիչ հանձնաժողովում չեն կարող ըն-
տրվել այն անձինք, վորոնք ընտրովի կամ վարձով
վորեւ պաշտոն ունեն իրենց վերաստուգմանը յեն-

թակա միութենական որդաններում. չեն կարող ընտրվել նույնպես և վոչ - միության անդամները:

4) Վերաստուգիչ հանձնաժողովների գործներությունը կրում ե պարբերական բնույթ:

Պարբերական վերաստուգումը հարմարեցվում է հաշվետու ընդհ. ժողովներին, համագումարներին, կոնֆերենցիաներին և ըստ հնարավորության՝ պլենումներին, բայց կատարվում է Յ ամիսը մի անդամից վրչ պահանջ: Միութենական ցածր որդանների՝ ֆաբրութաեղկոմների վերաստուգումը կատարվում է ամեն ամիս:

Ծանոթություն. Արտակարգ վերաստուգումներ կարող են լինել, յերբ ինքը վերաստուգիչ հանձնաժողովը գտնի այդ անհրաժեշտ, միութենական վերագաս կազմակերպության պահանջով, և նմանանապես՝ միության անդամների վոչ պակաս 1/4-ի պահանջով, վորոնք մտնում են միութենական միևնույն կազմակերպության մեջ:

5) Վերաստուգիչ հանձնաժողովը յուր աշխատանքի ընթացքում՝ ոգտվում է միութենական կազմակերպության տեխնիքական ապարատից և վոչ մի դեպքում չի ստեղծում յուր համար առանձին ապարատ:

Ծանոթություն. Վերաստուգումն կատարելու ժամանակ վերաստուգիչ հանձնաժողովն, ըստ յուր հայեցողության, միութենական համապատասխան որդանի միջոցով կարող է հրավիրել այդ գործում մասնագետ, բանիմաց ժարդկանց:

6) Վերաստուգիչ հանձնաժողովներն իրենց աշխատանքը կատարում են բանվորական ժամանակից դուրս

և այդ աշխատանքի համար վարձատրություն չեն ստանում:

Ծանոթություն. Անհրաժեշտ դեպքերում վերաստուգիչ հանձնաժողովները կարող են վերաստուգումներ կատարել և բանվորական ժամանակում, այդպիսի դեպքերում փաստորեն ծախսված բանվորական ժամանակվա համար նրանք վարձատրվում են միութենական միջոցների հաշվից:

7) Միութենական վերագաս մարմինների վերաստուգիչ հանձնաժողովները չեն խառնվում միութենական կազմակերպությունների իրենց յենթակա վերաստուգիչ հանձնաժողովների աշխատանքներին և վերջիններիս նկատմամբ չեն հանդիսանում զեկավարող

8) Վերաստուգիչ հանձնաժողովների անդամները մարմիններ:

միութենական մարմինների բոլոր նիստերում ներկայեն գանվում խորհրդակցական ձայնի իրավունքով:

9) Միութենական վերագաս որդաններին ներկայացվող զբանական և նյութական հաշվետվությունները վերաստուգիչ հանձնաժողովի ակտով հաստատվում են յուրաքանչյուր նախանշացվացին (սմետացին) շըջանի անցնելուց հետո: Ֆաբրութեղիոնների զբանական և նյութական հաշվետվությունները վերաստուգիչ հանձնաժողովի ակտով պետք ե հաստատվեն ամեն ամիս:

10) Վերաստուգիչ հանձնաժողովն անմիջականորեն չի խառնվում միութենական կազմակերպությունների ընթացիկ աշխատանքներին:

11) Վերաստուգիչ հանձնաժողովներն իրենց ընտրող միութենական կազմակերպության բլոր համագումարներում, հաշվետու ընդհանուր ժողովներում և կոնֆերենցիաներում պարտավոր են գեկուցումներանել իրենց աշխատանքի մասին:

12) Վերաստուգումների արդյունքների և յուր յեղբայցությունների մասին վերաստուգիչ հանձնաժողովը գեկուցում ե ինչպես վերաստուգման յենթակա որդանին, այնպես ել միութենական վերադաս որդաններին:

Զարաշահություններ հայտնաբերելու դեպքում վերաստուգիչ հանձնաժողովն այդ մասին հայտնում ե ի գիտություն ինչպես վերաստուգման յենթակա, այնպես ել միութենական վերադաս որդանին՝ համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար։ Այդպիսի դեպքերում վերաստուգիչ հանձնաժողովին իրավունք ե տրվում, միության վերադաս որդանի համաձայնությամբ, պահանջել արտակարգ համագումար, կոնֆերենցիա կամ ընդհանուր ժողով։

13) Յուր գործնեյության մեջ վերաստուգիչ հանձնաժողովը ղեկավարվում է վերաստուգան յենթակա միութենական որդանի մասին յեղած «կանոնադրությամբ» և միութենական որդանների դիրեկտիվներով։

14) Վերաստուգիչ հանձնաժողովի անդամները հանձնաժողովի նիստերին անհարգելի պատճառներով յերկու անգամ իրար յետերից ներկա չլինելու դեպքում,

մեքենայորեն դուրս են մնում, վորի մասին ընտրողներին հայտնվում ե ի գիտություն։ Վերաստուգիչ հանձնաժողովը այդ կերպ դուրս մնացած անդամներին փոխարինում ե թեկնածուներով։

15) Վերաստուգիչ հանձնաժողովներն իրենց կազմած ակտերում պետք ե մատնանշեն վոչ միայն հաշվապահական գրությունների, փաստաթղթերի վիճակի և կանխիկ դրամի մասին, այլ և այն, թե վերաստուգման յենթակա միութենական որդանն ինչպիսի գումարներ ե ծախսել ապարատը պահելու, կուլտաշխատանքի և միության անդամների կազմակերպչաշխատանքերը հոգալու վրա։ Ինչպես են ստացվել կան կարիքները հոգալու վրա։ Ենչպես են ուղարկվել մուծումները վերադրույթների գծով, արդյոք յուր ժամանակին և արդյոք լրիվ կերպով են ուղարկվել միության վերադաս որդաններին պատկանելիք գումարները, հաշվապահությունը տարվել ե արդյոք այն ձեռնույթը, վոր սահմանել ե միութենական համապատասնական վերադաս որդանը և այն (կանոնադրություն Պրոֆմիությունների Համամիութենական կենտրոնական նորմերի):

ՀՐԱՇԱՆՔ՝ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

I. ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1) Վերաստուգիչ հանձնաժողովների անելիքների մեջ են մտնում միութենական որգանների ամրող տնտեսական և զբաժաշխական գործնեյության ստուգումը:

Վերաստուգիչ հանձնաժողովն աշխատում է վերաստուգիչ հանձնաժողովների մասին գոյություն ունեցող կանոնադրության հիման վրա, յուր աշխատանքի մասին հաշիվ տալով ընդհանուր ժողովին կամ համապումարին:

2) Վերաստուգիչ հանձնաժողովը հակում է՝

ա) վոր միութենական որգանը յուր նախահաշիվը կազմի ժամանակին ու դա ճիշտ իր ժամանակին ներկայացնի միութենական վերադաս որգանին,

բ) վոր միութենական տվյալ որգանը բարեխղճորեն և իր ժամանակին կատարի յուր զբաժական պարականությունները միութենական վերադաս մարմնի հանդեպ,

գ) վոր տվյալ միութենական որգանը յուր ժամանակին ստանա անդամավճարները և մյուս մասնահանումները,

դ) վոր տվյալ միութենական որգանի նախահաշիվը վոր վորոշված դրամական միջոցները ծախսվեն ճիշտ և նպատակահարմար կերպով,

ե) վոր անդամավճարների գանձման գործը ճիշտ դրված լինի,

զ) վոր հաշվապահությունը, դրամական հաշվետվությունը և գործավարությունը ճիշտ կազմակերպված լինեն,

ը) վոր միջոցները պահպեն կանոնավոր կերպով:

II. ՎԵՐԱՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ

3) Վերաստուգում կատարելու ժամանակ վերաստուգիչ հանձնաժողովը՝

ա) պահանջում է, առաջին հերթին, ներկայացնել զբաժարկում յեղած գումարները, դա համեմատելով զբաժարկի պահանջազրքույթի մինչև տվյալ թիվը ցույց տված մնացորդների հետ;

բ) կատարում է զբաժարկային, յելեմտային դրամական փաստաթղթերի ստուգում. քննում ե դրամարկղային պահանջազրքույթի կատարված գրությունները, ուշազրքություն դարձնելով, չկան արդյոք շահումներ, ուղղված տեղեր և այլն:

գ) Սահմանում է, դրամարկղային պահանջազրքույթի արդյոք ճիշտ և վորոշված այն գումարը, վորը տվյալ թվին, վերաստուգում կատարելու պահին, գործնվում է դրամարկղում:

դ) Սահմանում ե, արդյոք ճիշտ ե հաշված պահանջագրույկում գտնվող մուտքի ու յելքի յուրաքանչյուր առանձին հոդվածի ընդհանուր գումարը, նույնպես և ամսական ընդհանուր գումարն ըստ հոդվածների, «ամսվա ընթացքում ամբողջ մուտքի», «ամսվա ընթացքում ամբողջ յելքի» դուրս բերված ընդհանուր գումարները:

Ե) Սահմանում ե, արդյոք ճիշտ ե վորոշված դրամաբեկու կանխիկ մնացորդը առ 1-ն հաջորդ ամսի:

Ղ) Սահմանում ե, ճիշտ ե արդյոք փոխադրված դրամաբեկի մնացորդը հաջորդ ամսվա մուտքի պահանջագրույկում:

Մահմանում ե, արդյոք յելքի և մուտքի որդերները ճիշտ են մտցված դրամաբեկային պահանջագրույկում:

Ը) Կան արդյոք արդարացուցիչ փաստաթղթեր մուտքի և յելքի բոլոր հոդվածների վերաբերյալ և ճիշտ են արդյոք նրանք կազմված, որինակ, յելքի փաստաթղթի վրա կա արդյոք ստացողի ստորագրությունը (ստացած գումարի քանակը պետք է գրված լինի վոչ թե թվով, այլ տառերով), փաստաթղթի վրա կա արդյոք համապատասխան մակագրությունն (резոլուցիա) այն անձի, վորը պատասխանատու յե կատարված ծախուի համար (դրամական միջոցների կարդարչի, անորենի մակագրությունը), գործուղղումների գծով կատարված ծախուերի փաստաթղթերին կցված են արդյոք գործուղղման վկայականներ և այդ վկայականների

վրա նշանակված ե տրդյոք, վոր գործուղղումը կատարված ե և այլն:

Ծանոթություն . Գրվածը գծերով չնշելը, ուղղելը և այլն, փաստաթղթերում և որդերներում չի թույլատրվում: Անհրաժեշտության դեպքում, ուղղումը կատարվում ե կարմիր թանաքով և այդ մասին ներքեռմ ծանոթություն ե գրվում և ստորագրվում և այն անձի կողմից, վորը պատասխանատու յե դրամական հաշվատվությունը վարելու համար:

Ծ) Դրամական փաստաթղթերը համարների կարգի խփությամբ կանոնավոր կերպով և իրենց ժամանակին կարվում են գործերին (յելքի և մուտքի փաստաթղթերը — յուրաքանչյուրն առանձին առանձին):

Ժ) Միութենական միջոցների մուտքն ու յելքը պետք ե կատարվեն ըստ իրենց ուղղակի նպատակների: Որինակ, կուլտֆոնդի գումարները չեն կարող մուտքի յենթարկվել անդամակաների հետ միասին և ընդհակառակը, կարմիր անկյան կազմակերպման և ակումբային աշխատանքների միջոցները չե կարելի հատկացնել վարչա - տնտեսական ծախուերին:

Ժա) Մանրամասնորեն և ուշադրությամբ նայվում են մուտքի և յելքի առանձին հոդվածները, վորոնց տրվում ե ըստ եյության պատշաճ գնահատություն:

ԺԲ) Մուտքի և յելքի դրամական միջոցների ստուգումը վերջացնելուց հետո, վերաստուգիչ հանձնաժողովը գրամարկային պահանջագրույկում կատարված գրությունների հիման վրա ստուգում ե դրամ-

արկղի՝ այդ գրքույկների ցույց տված մնացորդը, դրա հետ մեկտեղ հաշվի առնելով գրքույկում չնշանակված՝ մուտքի և յելքի որդերները:

ԺՊ) Փաստաթղթերի և գրքույկների ցույց տված մնացորդը պետք է համապատասխանի դրամարկղում գտնվող կանխիկ փողի գումարին:

ԺՊ) Քննում և ստուգում ե զանազան «անձերի և հիմնարկների» հաշիվները. ըստ վորում վերաստուգիչ հանձնաժողովը պետք է առանձին ուշադրություն դարձնի և աեղի ունեցող հաճախակի (ռոճիկի հաշվին, փոխադարձաբար) փող տարու վրա, վորպիսի հանգամանքը միութենական միջոցները անթույլաարելի կերպով ցիր ու ցան ե անում:

ԺԵ) Ստուգում ե ավանապային գումարների վճարման ժամկետները, գործուղղումների և այլ գումարների հաշիվների վերադարձնելը, սահմանում ե գումարն այն պարտքերի, վոր զանազան անձինք և հիմնարկներ պարտ են տվյալ միութենական որգանին:

ԺՊ) Ստուգում ե միության անդամների հաշվառման գրքույկը և անդամակիցարները, գրքույկում և անդամատումներում կատարած նշանակումները՝ անգամավճարները մուծելու մասին, ստուգում ե անդամակիցարների հանձնումը՝ միութենական վերադասորգանին, անդամակիցարների վճարման ճշտությունը. պարզում ե չվճարողների քանակը, չզանձված անդամակիցարների գումարը և չզանձելու պատճառները:

ԺԸ) Ստուգում ե աշխատանքային պայմանագրերի հաշվառման գրքույկը, տոկոսային վերադրույթների մուծումը դրամարկղ՝ ըստ այդ պայմանագրերի, և սահմանում ե այդ պայմանագրերի գծով մնացած պարուքերը. ստուգում ե միութենական աշխատանքի համար վերադրույթների գումարների ստացումը՝ համաձայն կողայիմանագրերի, փորոշում ե պարտքերի քանակը և պարզում, թե միութենական որգանն ինչպիսի միջոցներ ե ձեռք առել այդ պարտքերը ստանալու համար:

ԺԹ) Կատարում ե ինվենտարային գրքույկը ստուգում, պարզելով՝ կա արդյոք նման գրքույկ, արդյոք ամբողջ գույթն ե գրված նրանում. ստուգում ե — կա արդյոք կուլտունեցվածքի ինվենտարային գրքույկը:

ԺԺ) Սահմանում ե, թե արդյոք փաստորեն կատարված ծախսերը համապատասխանում են հաստատված նախահաշվին, միութենական տվյալ որգանը մնանք և արդյոք միութենական վերադաս որգանի հաստատած նախահաշվի իր շրջանակներում և յեթե չի մնում, ապա վոր հողվածների նկատմամբ և ինչու:

4) Բացի մատնանշածից, վերաստուգում կատարելու ժամանակ վերաստուգիչ հանձնաժողովը պահանջում ե հետեւյալ մատերիալները.

ա) տեղեկություն՝ համապատասխան կազմակերպություններից, վորոնց մոտ պահվում են միութենական տվյալ որգանի միջոցները, տեղեկություն՝ ընթացիք հաշիվների գրության մասին (պահ արված փողերի գումարը՝ մինչև վերաստուգման որը):

բ) քաղվածքներ այն հիմնարկներից և կազմակերպություններից, վորոնց հետ միութենական տվյալ որդանը փոխադարձ հաշիվներ ունի:

գ) տեղեկություն՝ տնտեսական մարմիններից այն մասին, թե վերջիններս, ըստ կոլլեկտիվ պայմանագրերի և տարիքային համաձայնությունների, վորքան փող են վճարել:

Այդ մատերիալների հիման վրա ոտուգվում է, արդյոք գրքույկներում ճիշտ են կատարված նշանակումները յեղի և մուտքի համապատասխան հողվածների վերաբերյալ:

5) Բացի դրանից, վերաստուգիչ հանձնաժողովն ստուգում է, թե միութենական տվյալ որդանում ինչպես և դրված գործակարությունը, թղթերի պահումը, գործերի կարումը, հարցերին պատասխանելը և այլն:

6) Այն դեպքերում, յերբ վերաստուգիչ հանձնաժողովն հայտնաբերում է թերություններ դրամական կամ վարչատնտեսական աշխատանքի բնագավառում, այդ թերությունները մատնանշվում են վերաստուգիչ հանձնաժողովի կազմած արձանագրություններում և ակտերում:

7) Վերաստուգիչ հանձնաժողովն ստուգում է, թե արդյոք մինչև տվյալ վերաստուգումը կատարելու որը վերացված են այն բոլոր թերությունները, վորոնք նկատված են յեղել անցյալ վերաստուգումների ժամանակ: Յեթե այդ թերությունները վերացված չեն, ապա վերաստուգման յենթակա մարմիններից բացա-

արություն ե պահանջում միջոցներ ձեռք չառնելու պատճառների մասին:

8) Վերաստուգիչ հանձնաժողովն արձանագրությունները և ակտը կազմում է 4 որինակ, վորոնցից մեկը մասում վերաստուգման յենթակա որգանի մոտ, յերկրորդն ուղարկվում է միութենական վերադաս որգանին, յերրորդը՝ մեջմիութենական որգանին, իսկ չորրորդը՝ պահում է վերաստուգիչ հանձնաժողովի գործերում:

Ծանոթություն. Վերաստուգիչ հանձնաժողովի՝ միութենական ցածր որգանների վերաստուգման ակտերը կազմվում են 3 որինակ, վորոնցից մեկն ուղարկվում և միութենական վերադաս որգաններին, յերկրորդը՝ պահում և վերաստուգման յենթակա որգանում, իսկ յերրորդը՝ վերաստուգիչ հանձնաժողովի գործերում:

9) Վերաստուգիչ հանձնաժողովի և վերաստուգման յենթակա որգանի միջև յեղած բոլոր տարածայնությունները հանձնվում են քննելու միութենական վերադաս որգաններին (ընդէ. ժողով, համագումար, միութենական և միջմիութենական դեկանար որգաններ):

10) Վերաստուգիչ հանձնաժողովները վերաստուգման արդյունքների մասին միության անդամներին իրակեկ են անում՝ այդ մասին գեկուցելով ընդհանուր ժողովներում, համագումարներում, հրատարակելով իրենց ակտերն ու արձանագրությունները միութենական մամուլում, պատի թերթերում և այլն:

(Հաստատել կենտրոնի նախագահությունը, արձանագրություն № 64,
14/Х 1926 թ.)

Ներածություն	Ե ՞
Վերաստուգիչ հանձնաժողովի ուղիղ աշխատելու պայմանները	3
Գյուղբանկոմի գրամական աշխատանքի ստուգումը	6
Միջոցների միաման ստուգումը	11
Գյուղբանկոմը ինչպես պետք է ստուգի զանձողների և սայցնական կոմիտեյի հաշիվները	20
Յեկամային փաստաթղթերի ստուգումը	22
Ստուգի, թե միջոցներն ինչպես են պահպամ	25
Գյուղբանկոմի վարչական և անտեսական գործնեյլության ստուգումը	31
Յեղբակացություն գյուղբանկոմի գրամական հաշվետվությունների առթիվ	33
Վերաստուգման ակտը	34
Ինչպես պետք է վերաստուգիչ հանձնաժողովը հաշվուայ յուր ընտրողներին	45
Հայիկածներ	
Հայիկած 1. Կանոնադրություն՝ վերաստուգիչ հանձնաժողովների մասին	49
Հայիկած 2. Հրահանգ՝ միութենական որդանների վերաստուգիչ հանձնաժողովների աշխատանքի կարգի մասին	54

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԻՇԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՐԵՏԵՐԻ

**ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԳՐՔԵՐԻՑ ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ
ՀԵՏԵՎԼՅԱԼՆԵՐԸ**

- | | |
|--|------------|
| Սոցիալիզմի ուղին,—ն. ԲՈՒԽԱԲԻՆ | 1 թ. 25 կ. |
| Ազգային Հարց,—ի. ԱՏԱԼԻՆ | 1 թ. 60 » |
| Դյուրացիական Հարց,—ի. ԱՏԱԼԻՆ | 50 » |
| Լենին. — Պատգամներ ժողովրդ. լրապետորյան մասին | 20 » |
| Լենին. — Պատգամներ յերիտասարդուրյան | 15 » |
| Համ. Կոմկուսի (բ) պատմությունը,—վ. ՎՈԼՍԻՎԻԶ | 1 թ. 50 » |
| Ոպպոզիցիան հոսանքները Համ. Կոմ. Կուս. (բ) ներառմ | 20 » |
| Բոլլեկիների կուսակցությունը 1917 թվին,—
ՅԵՄ. ՅԱՐԱՍԼԱՎԿՈՒԹ | 85 » |
| Ինչ ուից Հոկտեմբերը բանվորներին,—Մ. ՏՈՒՄԿԻՅ | 20 » |
| 1905 թ. մեր 1-ին բանվորագյուղացիական նեղափոխությունը,—ի. ՖԼԵՐՈՎ.ՍԿԻՅ | 70 » |
| Քաղաքական բառարան,—կազմեց Վ. ԱԲՐԱՄՅԱՆ (656 էջ) 2 թ. — | |
| Պատմական մասնակիությունը | 80 » |
| Պատմական մասնակիությունը 10 տարի,—ՆՈՎ.ԱԿՈՎ.ՍԿԻՅ | 70 » |
| «ի. ԱՏԱԼԻՆ» (համառ. կենսագր.) | 7 » |
| Ինչպես աշխատացնել գյուղխորհուրդները,—Զ. ԼՈՎՐԵՆՏՅԱՆ | 30 » |
| Պատերազմ չեն ուզուի, բայց դիմադրելու պատրաս են | 10 » |
| Ինչով և ուժեղ կարմիր բանակը,—ԶՈՐԻՆ | 15 » |
| Մերոդական ձեռնարկ (առողջների համար) | 70 » |
| Նոր-դպրոցի ճանապարհին (ժողովածու, 480 էջ) | 2 թ. — |
| Հասարակագիտությունը 1-ին ասինանի դպրոցում,— | 65 » |
| Դեղջիութին յով յերիսաները, | 25 » |
| Տղիսությունը յով սնանակատությունը,—վ. ԴՐԻՏԻՑԻՅԵՎ | 15 » |
| Ինչպես և սարբված տիեզերքը,—գ. ԳՐԱՎ.Ե (նկարագ.) | 50 » |

Արեվը, նաև վորդիները լեկ բռները,—Բ. Սելիմեակին (նկ.)	40 կ.
Ինչպես է առաջացել յեկ զարգացել կյանքը յերերի վրա,	50 »
Մարդու յեկ կենդանիների ծագումը,—Դ. Ա.ՊՈՂ. (նկ.) .	35 »
Մարդու մեթենա,—Մ. ԳՐԵԼՐԵՍՅԱԿԻՑ (նկարազարդ) . . .	50 »
Մարդու անտեսանիլի քննամիներն ու բարեկամները,—	20 »
Վորոն, կայծակ, կեթքականություն,—ԳՐԵԼՐԵՍՅԱԿԻՑ (նկ.)	40 »
Պատանի Պիռներ (ժողովածու, նկարազարդ)	60 »
Պիռներ, հետեւիր կենինի պատզամներին	20 »
Հոկտեմբեր (համառուս պատմ.)	10 »
Մեր ավագ յեղբայրներ—Կոմյերիստականները	33 »
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՁԱՐԴ ԳՐՔՈՒՅՑՆԵՐ, 25 անուն	
ԳԵՂԱՐԳԵՍՏԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ, 18 անուն	
ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ԳՐՔՈՒՅՑՆԵՐ, 8 անուն	
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԳՐՔՈՒՅՑՆԵՐ, 6 անուն	
ԴՊՐՈՅԱԿԱՆ ԶԱՆՈԶԱԾ ՊԻՏՈՅԵՐ (հայերեն տեխսով):	


ՆՈՐ ԼՈՒՅՍ ՏԵՍԱՆ

Հեռագիր, հեռախոս, ռադիո (նկարազարդ)	25 կ.
Կրօնների ծագումը (նկ.) (մասսայական)	30 »
Թագիր ուեր,—Ն. ՈՒԵՅՆԿՈՎ	20 »
Պայմար աշ վտանգի յեկ հաւաքվողականության դեմ	23 »
Կոմիներնի IV կոնֆրենի վորուումներ	30 »
Կոմիներնի տարը տարին	18 »
Քաղքագիտության դասագիրք կոմյերիս. համար	
պրակ I	40 »
» II	50 »
» III	45 »

ՀԱՆՉԱՎԱԾ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆ. — 1) «Հոդվածներ 1914—18 թ. թ. պատերազմի մասին», 2) «Ի՞նչ անել», 3) «Մի բայլ առաջ յերկու բայլ լետ» (ընդամենը 40 մամուլ):

Պահանջեցեմ մեր լիիդ գրացուցակը, վոր ուղարկում ե ձրի:



ՀՀ Ազգային գրադարան



NL0202944

29
14616 20.4.



94
„Как должна работать ревизион.
комиссия сельрабочкома“.
На армянском языке

